



## ԻՄ ՕՐԵԴԻՐԸ

13 Օգոստոսի, Երեւանքիլի:



Եռ նոր էր լոյսը լաղթահարել խաւարին և պատառել գիշերալին թանձր վարագոլը, երբ մեր ընդարձակ ննջարանում լսուեց պատիարակի լիահնչիւն ձայնը. «տղակը, վեր կացէք, ժամանակ է»: Արդէն ժամի 4 էր: Ամենքս վեր թռանք տեղերիցս, արագ հագնուեցանք և վերցնելով մեր երեսսրբիչները վազեցինք դէպի սառնորակ աղբեւրի աւազանը, լուացուեցինք. Թէյն էլ արդէն պատրաստ էր: Մինչև խմեցինք, ճանապարհորդական պարկերս շալակեցինք և վանքի բակում զոյտ-զոյտ շարուեցինք, արդէն ժամի 6-ը դարձաւ.

Երբ ամենքս պատրաստ էինք, պ. դաստիարակն ըստ սովորականին լայտնեց մեզ ալսօրուալ ճանապարհորդութեան նպատակը, բացատրեց այն սուրբ վալրերի պատմական նշանակութիւնն, ուր ալսօր ոտք էինք դնելու և Սանահնի ու Հաղպատի վանքերը նմանեցրեց լուսնաւ.

երկուորեակների՝ իբրև միւնոյն ժամանակի և հանգամանքների ծնունդ՝ համարեան թէ միւնոյն անձանց ձեռքով կտուցուած։ Յետոյ պ. դաստիարակի խնդրանօք՝ ծերունականագարդ Վարդան արքեալիսկոպոսը «Ճերուղղեա...» և պահպանիչ տսելով՝ օրհնեց մեր ուղևորութիւնը և բարի ճանապարհ ու վերադարձ ցանկացաւ մեզ։

Քալլերգի ներգաշնակ ու կանոնաւոր հնչիւնների համաձայն ոտքերս գետնին տրոփելով դուրս եկանք վանքի բակից, արևելեան պարսպի գոնով, անցանք գիւղի կալերի մօտով և «Խշերկուտօքի վրայով դիմեցինք գէպի «սր. Աստուածածնալ ձորաբ։

Գեղեցիկ առաւոտ է. արեգակն իր ոսկեգոյն ճառագալթները սփուլ է բարձր լեռների կատարներին. երկինքը պարզ է. թարմ և զով քամին փչում է երեսներիս Լսում է լեռնալին վտակի կարկաչահո ձայնը, ծառերի կանաչ տերեւների սոսափիւնը և թուչունների քաղցր գալլապիկն ու ճռուողիւնը։ Չորս կողմը տարածուած դաշտերի անթիւ ու բազմերանգ ծաղիկները բուրում էին իրենց անսուշահոտութիւնը։ Գիւղացինն սկսել էր իր գործը. գիշերուան արօտից վերադարձած նախիրը ցըւում էր գիւղը և հարսները կովկիթները ձեռքերին սպասում էին իրենց սիրուն «Նաշխունաներին, «Ծաղիկներին ու «Նարգիզներին։

Դուրս գալով «Աստուածածնալ ձորսից, անցնում ենք անտառածածկ բլրի լանջի երկարութեամբ ձգուած մի նեղ շաւզով, որ հօվանաւորուած է հոնի, վալրի խնձորի, շլորի, տխիլ և ալլ տեսակ ծառերով։ Սր. Կարապետ եկեղեցու բլրի արևելք. ալժմ մեր առաջը տարածւում է մի փոքրիկ լեռնադաշտ՝ ծածկուած արտերով։ Այսեղ արևի ճառագալթներն օգուտ քաղելով դաշտի ծառագուրկ հարթութիւնից՝ սկսեցին չարաճընթեամբ ալրել մեր դէմքերը, բայց մենք էլ մի փոքր ոյժ տալով մեր ոտքերին՝ փախուստ տուինք մի փոքր դէպի հարաւ և մասնք Որնակայ ծառադարդ և ստուերոտ ձորը։ Չորի վերին մասից, ահագին ապառածների վրայից, խո-

Խոջալով սրնթաց վազում է մի փոքրիկ առուակ, որ  
մի փոքր ցած իջնելով, կրկին ապառաժների վրայից  
ջրվէժի նման ներքև է ժափում: Հէնց ջրվէժի մօտ  
առուակի վրայ ձգուած է մի փայտեալ կամուրջ՝ հողով  
ծածկուած: Մ'ենք նստեցինք բնութեան ալդ սքանչելի  
տեսարանի մօտ և դիտում էինք սիրուն ջրվէժի սրըն-  
թաց թռիչքները. յետոյ թողնելով ալդ բանաստեղծա-  
կան վայրը, բարձրացանք գէպի դաշտը և Որնակ գիւղը:

Որնակ գիւղը մօտ 20—25 տուն հայ բնակիչ ու-  
նի. բոլորն էլ պարապում են երկրագործութեամբ և  
կենդանաբուծութեամբ. գիւղի գիրքը գեղեցիկ է՝ գըտ-  
նուելով երկու անտառապատ լեռների առաջը. գիւղի  
առաջը տարածւում է մի փոքրիկ դաշտավայր և ապա  
ահոելի ձորը: Գիւղի միակ եկեղեցին անշուք է և աղ-  
քատ. կառուցցել են Արզութեանները՝ հասարակ քարից.  
միմիայն արևմտեան պատը, որտեղ և եկեղեցու մուտքն  
է, շինուած է սրբատաշ քարից և մի քանի քարերի  
վրայ կան քան յակուած խաչքարեր: Քարեալ փոքրիկ  
գմբէթը՝ հէնց տանիքի եղբին է շինուած, դռնից վե-  
րև: Գիւղի աղբիւրը բերուած է 250 սաժէն հեռաւո-  
րութիւն ունեցող մօտակալ լերան ստորաներից, Թիֆ-  
լիզի կուսանաց անապատի միաբան արժ. կոյս Մանիա-  
լի ծախքով: Աղբիւրի կամարակապ որմի վրայ փակցրած  
է բարեգործ կոյսի յուսանկարը՝ շուրջը գըտած արձա-  
նագրութեամբ, որ վերաբերում է աղբիւրի շինութեանը:  
Տարաբաղդաբար ալժմ աղբիւրը կտրուած է և ջուր չէ  
դալիս:

Երգելով, խօսելով ու թմբկահարելով ուրախ ան-  
ցանք Որնակայ փոքրիկ դաշտավայրն էլ և օձապտոյտ  
ճանապարհով իջանք ձորը: Խնչ գեղեցիկ է լեռնալին  
բնութիւնն իր բոլոր հրաշալիքներով. անդնդախոր, ո-  
լորապտոյտ ձորը, կուսական անտառը, թռչունների տ-  
րագ թռիչքը, ձորի անդնդում վազող գետակի խուլ  
ձայնը, խիտ անտառի միջիք իրենց գոռող կատարները  
բարձրացնող ապառաժոտ սարերի տեսքը միանալով մի-  
մեանց հետ՝ մի ալնպիսի վեհ զգացմունքներ առաջաց-  
նող ամբողջութիւն են կազմում, որ մարդ մի ըոսկե

կանդ է առնում և նրա մտքերը դէպի անհունութիւնը սլանալով՝ ակնապիշ նայում է իր շուրջը . . . :

Դորի վճիռ աղբիւրի մօտ մի փոքր հանգստանալով՝ զովացանք նրա ստանորակ ջրերով և դիտեցինք մօտիկ գտնուող ջրաղացը: Դորը կոչւում է «Հաղպատաւայ ձոր» և ձորում տարածուած այգիներն ու ջրաղացներն էլ պատկանում են Հաղպատեցոց: ահա ալդ ջրաղացներից մէկն էր մեր դիտածը, որ մի հաստրակ, քարեալ խախուտ շէնք էր, միայն մի աղաքարով: նրա տակնակը ու վերնակներն էլ արագ շէին պատում՝ ջրի նուազութեան պատճառով:

Ալդտեղից օձապտոլտ ճանապարհներով դարձեալ բարձրացանք դէպի վեր և շուտով հասանք Հաղպատաւ դաշտը, ուր մեզ դիմաւորեց ալդ միջոցին Հաղպատ գլունուող և Շուլաւերի դպրոցի ուսուցիչ պ. Ս. Ք. որ մեր դպրոցի նախկին սաներիցն է: Մեր առաջը տարածուած է, մի փոքրիկ քարձրավանդակի վրալ, Հաղպատ գիւղը, իսկ գիւղից արեմուտք Հաղպատայ հոչակաւոր վանքը՝ շրջապատուած պարիսպներով: որքան մօտենում ես, այնքան սիրտդ սկսում է աւելի արագ բարախել, այնքան աւելի անհամբեր ես դառնում՝ շուտով համբուրելու ալդ սրբազն վալրի դարաւոր տաճարների քարերն ու պատմական նշանաւոր՝ թէ եկեղեցական և թէ իշխանական տոհմի անձանց շիրմիները: Այդ փառաշէն տաճարների խումբը, որ երկար դարեր իր հզօր ու կարծր կուրծքը դէմ տալով ժամանակի աւերիչ ժանիքներին՝ պաշտպանուել է և մաշել իր ունեցած ուժի և զօրութեան մեծ մասը, ալժմ կարծես ուժասպառ և յուսահատ՝ օգնութեան է դիմում իր բորբոսնած քարերը համբուրող և բարեպաշտ անձանցը . . . :

Անցնելով «սուրբ կիւրակէ» եկեղեցու աւերակների մօտով՝ կարգի ընկանք և զոյգ զոյգ՝ երգելով ու երաժշտութեամբ առաջ գնացինք: գիւղի երեխալքն երաշժտութեան և երգի ձայնի վրայ հաւաքուելով մեր շուրջը՝ հետաքրքրութեամբ դիտելով հետեւում էին մեզ: Հէնց գիւղի սահմանում դիմաւորեց մեզ պ. Գրիգորիս Երզնկեանը—ուսուցիչ և նախկին սան մեր դպրոցի—մէկ

Ճեռքին մատուցարանի վրայ դրած աղ ու հացը, իսկ միւս Ճեռքին եղանը. պարոնը մոտեցաւ դաստիարակին Հետևեալ կարճ ատենաբանութեամբ. «Այս սրբազն վայ. րում դիմաւորում եմ Զեղ աղ ու հացով և հալկական գէնքով. իբրև բնիկ Հաղպատցի, շատ ուրախ եմ Զեղ ալստեղ ընդունելով»: Այս անսպասելի տեսաբանը խորը տպաւորութիւն արեց ամենքիս սրտի վրայ. դաստիարակը ճաշակեց աղ ու հացը, սրտագին շնորհակալութիւն յալտնեց և մենք կըկին առաջ ընթացանք մեր քայլ-երգով:

Դիւղում կենդանութիւն էր տիրում. գիւղացիք արդէն սկսել էին կալերը. տղամարդիկ, կանալք, երեխալք, բոլորն էլ գործի վրայ էին: Կալերի միջով անցնելով՝ մտանք վանքի պարապի կամարակապ դռնով և «Համազասպը կոչուած փառաշէն գաւթի մօտով և կանդնեցինք զանդակատան և վանքի հիւրասենետակների մէջտեղը, ուր վանահայր Յակոբ վարդապետը պատրաստակամութեամբ ընդունեց մեզ: Կարգով մօտեցանք, համբուրեցինք հայր սուլըբի աջը, ստացանք նրա օրհնութիւնը և տեղաւորուեցանք մեղ համար յատկացրած սենեակներում: Առաւօտեան 9<sup>1/2</sup>, ժամն էր արդէն:

Մի փոքր հանգստանալուց լետոյ՝ մեզնից ամեն մէկն ազատ էր իր ցանկացած գործով զբաղուելու մինչև ճաշ: Ալդ ազատ ժամանակը համարեած թէ ամենքս գործ դրինք վանքի մասերը հարևանցի կերպով դիտելով: Ժամի 12-ին ճաշի զանգը հրաւիրեց մեզ կըկին ժողովուելու մեր բնակարանը. ճաշի սեղանը պատրաստուած էր վանքի զանդակատան ստուերում: Ամենքս սեղանի շուրջը բոլորուելով՝ մեր գիտակցութեան մէջ վերաբուդրուեց վանքի այն փառաւոր անցեալը, երբ միաբանական սեղանի շուրջը ճաշում էին մօտ հինգ հարիւր միաբաններ. երբ՝ վաղ առաւօտեան, ճաշին ու երեկոյեան վանքի զանդակների հնչիւնները միաբաններին եկեղեցի էին հրաւիրում և միախառնուելով եկեղեցականների ջերմեռանդ սրտից բղխած բարձրաձալն օրհնութիւնների հետ՝ դէպ երկինք էին վերառաքում . . . : Ալդ փառաւոր անցեալի ալժմեան բեկորների ներկայա-

ցուցիչ և միակ միաբան վարդապետի օրհնութեամբ  
սեղան նստեցինք և վերկացանք:

Երեկոյեան ժամի 4 էր, երբ մեր փողհարի հնչեց-  
րած հաւաքուելու նշանը կրկին ժողովեց մեզ մեր  
դաստիարակի շուրջը. զուգ զուգ կանգնելով՝ դիմեցինք  
դէպի սուրբ նշան եկեղեցու զաւիթը և մեր սովորա-  
կան եղանակով դիմեցինք, չափեցինք, արձանագրու-  
թիւնները կարգացինք, կարեոր նկատողութիւնները  
նշանակեցինք մեր լիշտակարաններում։ Ամբողջ երկու  
և կէս ժամ զբաղուելով՝ այս գաւոթի դիմողութիւնը  
հազիւ թէ վերջացրել էինք, երբ լսեցինք վանքի զան-  
գակների քաղցրահնչիւն զողանջիւնը. մտանք սր. նշան  
եկեղեցին, ունկնդիր եղանք ժամերգութեանը և վեր-  
ջացնելուց յետով՝ սոյն եկեղեցու դիմողութիւնը թող-  
նելով վազուան համար, օրովհետև արդէն մութն էր  
ներսը, դիմեցինք դէպի գիւղից դուրս գտնուող աղ-  
բէրները։

Սիրուն երեկոյ էր. արեկի վերջին ճառագալթներն  
ընկնելով սարերի կանաչազարդ կատարներին՝ աչքին  
դուրեկան լուսաւորութիւն էին տարածել։ Վանքի  
պարսպի արեւելեան կամարակապ դռնից դուրս գալով  
և գիւղի միջով անցնելով՝ հասանք սրբատաշ քարից  
շինուած և խորանազարդ աղբէրին։ Դիտելով աղբէրի  
մօտի ճանման ընդարձակ աւազանը, գերեզմանատու-  
նը, խաչարձաններն ու խաչքարերը՝ շարունակեցինք  
մեր ուղին դէպի սր. կիս կոչուած անտառածածկ լեա-  
ռը և հասանք աւազան» կոչուած աղբէրի տեղը. այս  
աղբէրն իսկապէս առաջին մեծ աղբէրի ակունքն է.  
շինուած է եղել սրբատաշ քարից և արձանագրուած  
քարն էլ ընկել ու կոտրուել է, տեղացիների ասելով  
հետեւալ պատճառով. տեղական քահանաներից մէկի  
կոլը ձին սաստիկ ծարաւ զգալով՝ ներս է մտնում աղ-  
բէրը և այլ ևս չի կարողանում դուրս գալ. ձիատէր  
քահանան քանդում է աւազանի մուտքի կամարները,  
հանում է իր ձին, իսկ քանդածը թողնում այնպէս...:  
Զերմաշափը հինգ ըոպէաչափ աղբէրի ջրի մէջ դնելով՝  
ցոյց տուեց 7º ըէօմիւրի—երկու աստիճանով աւելի

սառը, քան թէ Սանահնի տղբիւրի ջուրը—բայց ավ-  
սան որ զըի ստորերկրեալ խողովակները փչացած ու  
կոտրտուած լինելով՝ մինչև որ ջուրը հասնում է գիւ-  
ղի աղբիւրը՝ տաքանում է։ Մեր բոլոր դիտողութիւն-  
ները վերջացնելով՝ երգելով և զինուորական քայլով  
կրկին իջանք գիւղը, մտանք վանքի պարիսպը և թէլն  
ու թեթև ընթրիքը վալելելուց լետոյ՝ պառկեցինք մեզ  
համար պատրաստուած անկողիններում։

#### 14 օգոստոսի, չորեկշաբթիւնի. Հաշոտափ:

Այսօր մի գեղեցիկ և լուսապայծառ օր է։ առա-  
ւոտեան վաղ արթնանալով և թէլ խմելով՝ ճիշտ ժամի  
ութին Յակոբ հայր սուրբի և դաստիարակի առաջնոր-  
դութեամբ, դիմեցինք դէպի սբ։ Նշան եկեղեցին և  
սկսեցինք մեր մանրամասն դիտողութիւնները, որ տե-  
ւեց մինչև ժամի երկուսը։ Այս փառահեղ և հրաշալի  
տաճարը Հայաստանի փառքերից մէկն է։ Աբ. Նշանը  
հոչակուած է ամբողջ Լոռուար իբրև հրաշագործ մա-  
սունքի, կենաց փալտի, կենդրոնավայր։ Աբ. Նշանը  
երբեմն երբեմն պատեցնում են ամբողջ Լոռուար գիւ-  
ղերում՝ երաշտի, հիւանդութիւնների և ընդհանուր  
դժբաղդութեան դէպիքերում։ Այս սրբազան մասունքը  
Բագրատուննեաց տան սեպհականութիւնն էր։ Խոսրո-  
վանուշ թագուհին յատկացրեց տիս եկեղեցուն, որ և  
մասունքի անունը ստանալով՝ կոչուեց սբ։ Նշան եկեղեցի։

Աբ. Նշան եկեղեցու ներքին մասի դիտուութիւնը  
վերջացնելով՝ վերադարձանք մեր բնակարանը, ճաշե-  
ցինք, մի փոքր հանգիստ առանք և երեկոյեան ժամի  
հինգին նորից սկսեցինք մեր գործը. դիտեցինք սբ.  
Նշան եկեղեցին արտաքին կողմից, սբ. Գրիգոր և սբ.  
Աստուածածին եկեղեցիները և Համազասպի գաւթի մօտ  
գտնուած երեք խորանազարդ գամբարանները։ Գիշերը  
վրայ հասնելով՝ արգելեց մեզ շարունակել միւս շէն-  
քերի դիտողութիւնը. խմբովին գնացինք մեր բնակա-  
րանը և թէլ խմելուց, ընթրելուց ու մի փոքր զուար-  
ճանալուց և խաղալուց լետոյ պառկեցինք քնելու։

## 15 օգոստոսի, հինգշաբթի:

Առաւտօտեան վաղ արթնանալով՝ մինչև թէլ խմելն ազատ էինք ամեն մէկս մեր ցանկացած գործով զբաղուել. իսկ թէլ խմելուց յետով, ճիշտ ժամի 9-ին, խըմբուելով մեր դաստիարակի շուրջը՝ դիմեցինք դէպի վանքը՝ նրա մնացած մասերը դիտելու: Նախ գնացինք դէպի Համազասպի շինութեան որմի մօտ գտնուող մատուռները, որի դիտողութիւնը թերի էր մնացել. նախընթաց երեկոյեան և կարգացինք երկու մատուռների վրայի արձանագրութիւնները: Այնուհետեւ անցնելով Համազասպի արևմտեան որմի տակով՝ մտանք նրան կից սր. Նշան եկեղեցու հիւսիսային գավկիթը: Դաւիթը դիտելուց յետով անցանք դաւթի արևելեան կողմն եղող գրատունը, յետոյ սր. Նշան եկեղեցու արևելեան որմին կից եղող գաւկիթը, տապա Համազասպ կոչուած ընդարձակ շինութիւնը, վանքի զանգակատունը և վերջապէս ձիթահանք կոչուած շէնքը, որով և վերջացրինք վանքի դիտողութիւնը:

Ժամի 12-ին գնացինք ճաշելու. ապա հանգստացանք մի փոքր և երեկոյեան ժամի 5-ին նորից խըմբուելով՝ վանքի պարսպից դուրս եկանք, որպէս զի դիտենք շրջակալքում գտնուող հնութիւնները: Նախ դիմեցինք դէպի կուսանաց անապատ կոչուած եկեղեցին և ապա կրկին վանք վերադառնալով՝ հասանք Զգրաշէն եկեղեցին: Արդէն մութն ընկնում էր, որ զինուորական քալլով ու երգելով վերադարձանք մեր բնակարանը:

Այսպիսով երեք օրուայ ընթացքում վերջացրինք Հաղպատ հոչակաւոր վանքի և շրջակալ հնութիւնների դիտողութիւնը և արձանագրեցինք բոլոր մանրամասնութիւնները մեր լիշտակարաններում<sup>1)</sup>:

Թախիծը պատում է մարդուս սիրտը՝ երբ մտքով սլանում է մեր նախնեաց փառաւոր ժամանակները և

1) Մտադրութիւն ունենալով Հաղպատի մանրամասն նըս կարագիրն աւանձին հրատարակել, զանց ենք առնում այստեղ ևս առաջ բերելը և կարճ ենք կտրում:

լանկարծ սթափուելով՝ տեսնում է ներկալի տխուր ա-  
ւերակները...։ Ի՞նչ դրութեան մէջ էին այդ վանքերը  
մի ժամանակ և ի՞նչ դրութեան մէջ են ալժմ։ Էնչ  
կենդանութիւն էր տիրում այդ հրաշակերտ տաճարնե-  
րի շուրջը և որպիսի ամալութիւն ալժմ։ որպիսի հո-  
գեբուղիս քաղցրալուր շարականներ էին հնչում քըրտ-  
նաշան և ուսումնասէր միարանների դասերէց, իսկ  
ալժմ չղջիկների թւերի ձայներն են միայն սթափեց-  
նում այդ սրբավայրերում կանգնած և մտքերի ովկիա-  
նոսում խորասուզուած ամեն մի հայ մարդուն։։

### 16 օգոստոսի, ռւբէալ. Կոյեան բերդ։

Երեք օր վանքում հիւրասիրուելուց յետոյ, այսօր  
առաւտօտեան վաղ վերկացանք և պատրաստութիւններ  
տեսանք վերադառնալու մեր կենդրոնավայրը՝ Սանահին։  
Միայն երեք օր մնացինք այստեղ, բայց այդ կարճ մի-  
ջոցում շատ բան կարողացանք տեսնել, շատ բան լսել  
և շատ էլ սովորել ու զգալ։։ Երբ ամեն բան պատրաստ  
էր, մախաղներս առանք մեր ուսերը, ցուպերը ձեռքե-  
րս և կարգով շարուելով վանքի բակումը՝ մեր խորին  
շնորհակալութիւնը լայտնեցինք վանահայր արժ։ Յակոբ  
վարդապետին, որ անտրտունչ և պատրաստակամու-  
թեամբ օգնել էր մեզ, որքան կարողացել էր։ Ապա այդ-  
պէս կազմ ու պատրաստ գնացինք եկեղեցի և ներկայ  
եղանք առաւտեան ժամասացութեանը։ որպիսի զգաց-  
մունքով էինք լսում։ կարծես հարիւրաւոր միանձանց  
օրհնութեան ձայնը լսելիս լինէինք։ որքան քաղցրալուր  
էր հնչում այսօր «Փառք ի բարձունա» հոգեբուղիս փա-  
ռաբանութիւնը։ Ժամերգութիւնը վերջանալուց յետոյ  
քահանաներից մէկը, մեր ինդիրքով դուրս բերեց սր.  
Նշանը և մեզ վրայ «պահպանիչ» ասաց, իսկ միւսն իր  
շնորհալի ձայնով երգում էր «Ապահովինեցաք» շարականը։  
Ռոպէն խորհրդաւոր էր. ամենքս էլ լուռ էինք, կար-  
ծես մի ներքին երկիւղ էր պատել մեզ. գլուխներս քաշ  
գցած, բայց մտքներս արթուն աղօթում էինք և խընդ-  
րում Ամենաբարձրեալից, որ պահի ու պահպանի մեր

նախնեաց այս թանկագին լիշտակարանները, որ կտնդնել են նրանք հազար ու մի չարչարանքով և աւանդ թողել մեզ համար: «Պահպանիչը» վերջանալուց լետոյ ողբիսի պատկառանքով համբուրեցինք կենաց փայտի սրբազն մասունքը...:

Եկեղեցուց գուրս գալուց լետոյ հրաժեշտ տուինք մեր բարեկամներին և գուրս եկանք վանքի պարսպից: Տնաս բարեկ Հաղպատ, գուցէ մեղնից շատերն այլ ևս չկարողանան քո սրբութիւնները կրկին անգամ համբուրել, բայց ուր որ գնանք, ուր որ լինինք, քո լիշտակը միշտ վառ կմնալ մեր սրտերում...:

Երկինքն ամպամած է, օդը զով. տխուր եղանակը համապատասխանում է մեր սրտի արտայալտութեանը: Մեր թափածալի երգեցողութեան և երաժշտութեան հընդիւնները թնդացնում են ամբողջ գիւղը. գիւղացիներն իրենց կանգնած հրաժեշտ են տալիս մեզ. երեխանները հետեւում են մեր խմբին: ճանապարհը հետըզհետէ իջնում է ոյոր մոլոր շաւիղներով և փոքր առ փոքր վանքը չքանում է մեր աչքերից. վերջին անդամ երեխաններս դարձնում ենք դէպի այդ սրբավայրերը և տխուր հայեացք ձգելով՝ բաժանեւում նրանցից: Զորի գլխին հրաժեշտ տուինք մեզ ուղեկցող բարեկամներին և օձապտուտ քարքարոտ զառի – վայրով սկսեցինք ցած իջնել: Մեր դիմոցը, ձորի միւս կողմը, կան ապառաժներ՝ պատի նման ուղղահայեաց, որոնց մէջ երեւում են բազմաթիւ մեծ ու փոքր ալբեր. երբ ձորում թմբուկ էինք ածում, սարսափելի ուժգին արձագանք էր լսում: Սնցնելով անստառապատ ժայռերի միջից՝ ճանապարհը փոքր գետակի ձախ կողմից երկուսի է բաժանում. մէկը տանում է դէպի Սանահին, միւսը դէպի Կալեան բերդը. մենք վերջին ճանապարհով ընթացանք:

Այս ձորը, որ Սևորդեաց ձորի մի մասն է կազմում, կոչում է «Հաղպատայ ձոր» և ընկնում է Հաղպատից դէպի արևմուտք. միջից հոսում է «Հաղպատաջուր» գետակը. այս ձորումն են գտնուում Հաղպատեցոց ընդտրձակ ալգիներն ու բանջարանոցները, ի թիւս ալլոց նաև վանքի երկու ալգիները: Զորում կան բազմաթիւ հնութեանց

Հետքեր, ինչպէս օրինակ. «Կոտրած բեմ», «Ադռաւի տապան», մի քարաշեն վոքքիկ մատուռ, վանքապատկան ալգու մօտ, որ շինուել է Շև թուին հայոց Սարգիս առաջնորդի ձեռքով, որ տնկել է նոյնպէս ալդ ալգին և ընծայել վանքին: Կան նաև բազմաթիւ խաչքարեր՝ արձանագրութիւններով և գերեզմանաքարեր: Հաղպատաշը ի վրալ կառուցուած քարեալ կամուրջի մօտ է վանքի ջրաղացատեղին:

Ահա երևում է և Կալեան բերդն իր զարմանալի տեսքով. կարծես մի օդային ամրոց լինի. կառուցուած է երեք կողմից անդնդախոր ձորերով շրջապատուած մի ապառաժոտ բլրի վրալ. մեր ճանապարհից երևում է միայն եկեղեցին և բերդի հարաւալին կողմի պարիսպներն ու բուրգերը: Բերդի տեսքը տիսուր լիշողութիւններ է արթնացնում մեր մէջ՝ լիշեցնելով Լոռուալ բերդի աւերակները...: Բարձրանում ենք զառիվալր նեղ լեռնային շաւլով և դժուարագնաց ժայռերով մագլցում դէպի բերդը. քանի առաջ ենք գնում, այնքան դժուարանում է ճանապարհը: Վերջապէս բարձրացանք աւերակ բերդի առաջին հանդիպակած բուրդի վրալ, որտեղից տեսարանը հրաշալի և բանաստեղծական է: Փչում է այն լարստեղ զով քամին, որ երբեմն զովացնում էր ալդ բուրգերի վրալից կոռուող քաջ հայ զինուորների տաքացած ճակատը:

Երեք քառորդ ժամ բարձրանալուց յետոյ արդէն բերդի պարսպի մէջ էինք. պարսպի շուրջը մի պտոյտ անելուց յետոյ սկսեցինք մեր մանրամասն դիտողութիւնները:

Կալեան բերդը գտնուում է Հաղպատի և Սանահնի միջավայրում, մի փոքր աւելի մօտ Հաղպատին, շինուած է թերակղզու նմանութիւն ունեցող քարաժայու բլրի վրալ: Արևելեան, արևմտեան և հիւսիսային կողմերից շրջապատուած է անդնդախոր ձորերով. արևելեան կողմից Հաղպատաձորն է, իսկ հիւսիսային և արևմտեան կոմից Զորագետն է հօսում. միայն հարաւալին կողմից միանում է Որնակալ դաշտի հետ: Բերդը շրջապատուած լինելով ամուր պարիսպներով, բուրգերով և աշտարակ-

ներով՝ անառիկ են դարձնում նրան։ Բարձրավանդակը փոքր տարածութիւն բռնելով՝ բերդն էլ հարկաւ փոքր է. պարսպի միջի տարածութեան երկարութիւնն է ընդամենը 175 արշին (125 արշինով պակաս Լոռուալ բերդի պարսպի երկարութիւնից). Խսկ լայնութիւնը՝ եռանկիւնու վերջին ծալրին, որտեղ սահմանագծուում է թերակղղիանման բլուրը, 16 արշին է. ամենաբարձրակ տեղի լայնութիւնն 30 արշին է։ Բերդը գտնուում է 800 մետր բարձր ծովի մակերևոյթից (200 մետր Սահմանից ցածր). Ժամի 9 ին ջերմաչափը ցուց էր տալիս 18 աստիճ. Ի.

Բերդի մէջ, արևելեան կողմը, հէնց պարիսալների շարքում զինուած է մի փոքրիկ եկեղեցի, սրբատաշ քարից, որ կառուցել է Հաղպատի առաջնորդ Յովհաննէս Արքեպիսկոպոսը։ Ալդ եկեղեցու արևմտեան մուտքի ճակատին կալ հետեւեալ արձանագրութիւնը.

«Ի թվին ՈԶԲ (682 հ. և 1233 փրկչ.) կամաւն Աստուծոյ ես Տէր Յովհաննէս առաջնորդ Հաղբատալ քուեր որդի մեծի Պատրոնաց Զաքարէի և Խւանէի ի ժամանակի՝ որ եհաս սասանուումն աշխարհ «Հիս մերոյ լուսաւրէն Խորազմեանց ոչ գոյր տեղի աապաստանի սբ. Նշանիս և եղբարցս. Հրամանաւ քեռւոյն իմոյ Խւանէի և որդւոցն իւրոց Աւագին «և Նահնշահի որդւոյ Զաքարէի շինեցի զամլոցս և զեկեղեցիս Հաղբատալ սբ. Նշանիս բազում աշխատութեամբ։ Արդ եթէ ոք զսա ի Հաղբատալ «Հանէ թէ ի մեծաց և թէ ի փոքրունց զինչ և իցէ պատճառաւ մարդն այն նզովեալ եղիցի ի մահուան և ի կենաց՝ լԱդամալ մինչև ի գալուստն «Քրիստոսի՝ ինչ նզովք կալ ի վերալ նորա. եղիցի երերեալ և տատանեալ որպէս Կալենի. և բաժին «Յուղալի առցէ. և աւանդիչ հոգւոյ նորա Սատանայ զիցի. և առաջնորդ սորա՝ որ կամաւոր նախանձու «կամ ծուլութեամբ կամ կաշառաւք զսա ի Հաղպատալ հանէ զվերագրեալ նզովքն առցէ և որք հաստատեն աւրհնին լԱստուծոյ, և պարտին ինձ Տէր

«Յովհանիսիս զԱստուածածնի տաւնի Գ. աւրն ի «սմա պատարագն ինձ մատուցանելք»:

Եկեղեցին կանգնած է չորս անսիւն կամարների վրայ, նման Հաղպատի Զդրաշէն եկեղեցուն, ունի գմբէթ. իւրաքանչիւր որմում կայ մի մի պատուհան. կաթուղիկէն նոյնպէս չորս պատուհան ունի: Եկեղեցու լայնութիւնը հարաւից-հիւսիս 4 արշին 5 վերշոկ է. երկարութիւնը, արևելքից-արևմուտք  $7\frac{1}{2}$ , արշին:

1827 թուին սաստիկ երկրաշարժից կործանւում է այս եկեղեցու կաթուղիկէն ու քարերը թափում են ձորը, բայց 1836-ին երեք հարազատ եղբալրներ՝ Մարգար, Վարդան և Յարութիւն Երզնկեանցները Եփրեմ վարդապետի ձեռքով նորոգել են տալիս կաթուղիկէն՝ նախկին ձևով: Յիշեալ բարեպաշտ եղբալրներից մէկը թաղուած է եկեղեցու հիւսիսալին որմի տակ, արտաքուստ. տապանագրի վրայ արձանագրուած է.

«Ի ներքոյ վիմիս հանգչի մարմին Մարգարայ Երգընկեանց վերանորոգողի տաճարիս, որ ննջեաց ի «Տէր 1842 ամի ի հաս. 67 ամաց»:

Համբարձման և Վարդանանց տօնի օրը շրջակայգիւղերից բազմաթիւ ուխտաւորներ են գալիս այստեղ. Համբարձմանը գալիս են Հաղպատեցիք, իսկ Վարդանանց տօնին աւելի հեռաւոր գիւղերից: Ուխտաւորների համար եկեղեցու մօտ կառուցուած է քարուկրեալ մի յարկանի հասարակ շինութիւն:

Բերդի մէջ միայն եկեղեցին է կանգուն մնացել, միւս շինութիւնները բոլորն էլ հողի հետ հաւասարուել և միայն հետքերն են երևում. պարիսպներն էլ կիսով չափ քանդուած են, ներքին մասերն են մնացել միայն: Ճշտութեամբ յալտնի չէ Կալեան բերդի սկզբնաւորութեան ժամանակը. յալտնի է միայն, որ գոյութիւն է ունեցել Լոռուայ թագաւորների ժամանակ և ինչպէս պատմութիւնից յալտնի է, Լոռուայ Դաւիթ Անհողին թագաւորը պաշտպանուել է այստեղ՝ թշնամուդէմ: Կալեան և Կալճան բերդերն լիշտում են իրեւ Դրիգոր Մագիստրոս իշխանի կալուածներ. այնուհետև եղել է Զաքարէ և Խւանէ սպասալարների սեպհակա-

նութիւն, որոնք զանազան ժամանակ պաշտպանուել են այստեղ թշնամիներից։ Ըստ պատմական տւանդութեան՝ Որնակ գիւղի վերին աղբիւրից ստորերկրեալ խոզվակներով ջուր է բերու ած եղել բերդը. մինչեւ ալժմէլ ցոլց են տալիս այն տւազանի հետքերը, որտեղ հաւաքուելիս է եղել աղբիւրի ջուրը. ալժմ ալդ տեղը լըցուած է քարով ու հողով<sup>1)</sup>, Աղբիւրի հետքերն երեւում են նաև արտաքին պարսպի մէջ. ալժմ կան խոզվակներ, որոնց ուղղութիւնը գէպի ձորն է։ Երբ Լոռու թագաւորութիւնն ընկնում է և երկիրը շարունակ ենթակալ է լինում թշնամիների յորձակմանը Հաղպատի սր. նշանը ոսվարաբար բերում են այս անտոիկ վալրում պահում. շատ անդամ էլ արջակալ գիւղերի բնակիչներն ապաւտան են գտել այս փոքրիկ տմրոցի պարիսպների մէջ։

Եկեղն իր եկեղեցիով գիւղացիների լորջորջմամբ կոչում է «Ճսեւանց», որ երկու մեկնութիւն ունի. առաջինով բացատրում է իբրև «Դրսեվանց» այսինքն Հաղպատից դուրս եղող վանք. երկրորդով ալդ բառը համարում է իբրև աղաւազումն «Ճես և անց» բառերե, որ իբրև թէ ստացել է իր անմատչելիութեան պատ-

<sup>1)</sup> Զըկ հալորդակցութեան վերաբերեալ Սանահնում մեզ պատմեցին հետեւեալը. Երբ Արքավազնելն արշաւում են Գուգարաց աշխարհը՝ շատ տեղեր նուաճելով ու աւերելով մտնում են Լոռի և մեծամեծ վնասներ հասցնելով թէ գիւղերին և թէ վանքերին, պաշարում են նաև Կայեան բերդը. Բերդի մէջ ապաստանուածներն երկար ժամանակ դիմադրում են և չեն հնազանդում Արքավազներին։ Արքավազները սաստիկ կատաղում, գնում են Որնակ և ընտկիչներին անխնայ կոտորում, ապա բբռնում են մի պառակի և ստիպում, որ յայտնէ բերդի գաղտնիքը. պառաւեն ուղենալով իր գլուխն ազօտել մահից՝ յայտնում է, որ նրանց զրի պաշարը Որնակի աղբիւրներիցն է գնում ստորերկրեալ անցքերով, և եթէ ջուրը կտրեն՝ բերդն անձնատուր կլինի։ Արքավազները սպանում են պառակին, զրի աղբիւրը կրտսում և բերդում եղողներն անձնատուր լինելով բոլորը կոտորում են։ Ժողովրդական լեզուաբանութիւնն էլ Մընակ անունը բացատրում է «Որն է ակը» բառերով, այսինքն թէ ո՞րն է բերդի աղբիւրի ակը, ակունքը։

ճառովի «Տես և անց» կոչումը լիշում է նաև Զաքարիա սարկուագ պատմագիրը:

Բերդից սիրուն պատկեր է ներկալանում գիտողի առաջը, արևմտեան և հիւսիսան կողմից կատաղութեամբ գոռալով և ահոելի աղմուկի բարձրացնելով հոսում է Զորագետը. մերձակայ վալրերը ծածկուած են անտառներավ և հնձած արտերով, իսկ հորիզոնում երեսում են բարձրաբերձ լեռների գագաթները. լեռան լանջի վրայ, գէպի հիւսիս-արևեմուտք, երեսում է «Աթոռիկ» սիրուն կոչումն ունեցող տեղը, որ մի փոքրիկ բարձրաւանդակ է: Այդ բարձրաւանդակի վրայ երեսում են աւերակ գիւղի հետքեր. այդ աւերակների մօտ, մի բարձր բլուրի վրայ երեսում է Անդրէի վանքը, որ ինչպէս պատճում են, բոլորովին աւերակ է: Տխուր, տրտում աւերակ, զրկուած իր շուքից, իր մեծ վարդապետ Վարդան Բարձրքերկեցուց, որ առանձնացած այսաեղ գրել է իր ելքասիրութիւններն. այլ ևս չի լսում այդ սր. վալրում նրա վարդապետական խօսքը. այժմ նրա ոսկերքը հանգչում են նոյն տեղում, ուր անցրել է իր կեանքի մեծ մասը՝ ուսուցանելով և վարդապետելով. մի կոփածոյ քարից շինած տապանաքար և մի համեստ խաչարձան զարդարում են նրա մոռացուած դամբարանը:

«... Առեալ զալս գիր հաւանութեան իմաստնոցն « վարդապետին Վարդանալ, առաքէ առ կաթողիկոսն « Կոստանդին ի Կայան Հռովմէտական և ինքն եկեալ ի « Կայեանալ մենարանն իւր, զոր սուրբ Անդրէ կոչէին, « հանդէպ անառիկ բերդին Կայենալ և անդ դադա. « բեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա « վարդապետական բանին»: Կիրակոս պատմագիր:

Զորագետի սաստիկ վարար լինելու պատճառով զրկուեցինք այդ սուրբ վալրը համբուրելու բաղդից. շատ, շատ էինք ափսոսում, բայց ինչ կարող էինք անել բնութեան դէմ:

Բերդի գիմացը, արևելեան կողմից, ուղղահայեաց բարձր ժայռերի մէջ երեսում են բազմաթիւ մեծ ու

Փոքը ալրեր, որոնցից մի քանիսն այնքան ընդարձակ են, որ թշնամու յարձակումների միջոցին ամուր բերդերի տեղ են ծառայել և բազմաթիւ անձինք և թանկագին իրեր են պահպանել հալածողների ձեռքից։ Այդ ալրերից նշանաւոր է Զարեհի այրը, որ այժմ գիւղացոց բարբառով կոչւում է «Զառնի էր»։ ալրը շրջապատուած է որմերով և բրջերով, անառիկ է։ մի երկրորդն էլ կոչւում է «Պարնի էր»։ Երկուսն էլ շինել է տուել Հաղպատի Զարեհ պալազատ իշխանը։ Վերջին ալրն այդ իշխանը շինել է տալիս յատկապէս իր ընտանիքի ապահովութեան համար։ գրա մէջը կալ քարեալ աւագն՝ ջրի պաշար ունենալու համար։ Այդ երկու ալրերից բարձր, միապաղաղ ժայռի մէջ գտնւում է դժուարագնաց «Ճակ ալրը», որ գաղտնի և ապահով տեղ է եղել։ Այդ ալրերից է պ. Ա. Երկեանը 1873 թ. հանել բազմաթիւ հին մագաղաթեալ ձեռագրներ, որոնք երկար ժամանակ անձրևի և խոնաւութեան մէջ մնալով կրաշաղախ էին դարձել և քարացել։

Բացի այդ երեք նշանաւոր ալրերից կան նաև բազմաթիւ մեծ ու փոքը ալրեր, բոլորն էլ համարեած դժուար մերձենալի կամ թէ անմերձենալի ժայռերի, քարափների մէջ, ծերպերի գլխին։ ինչպէս օրինակ «Խրամաձորի» քարալը, «Ջրոց էրը», «Պնդոցը», որ միայն 300 մարդ կարող է տեղաւորել իր մէջ, «Լաստու էրը», «Կաթանքաէրը», «Ճակաքար» և այլն։ Մարդ զարմանում է և ափ ի բերան հիացած մնում տեսնելով այդ անառիկ ալրերը, որոնց ինչպէս ասում են՝ «ղուշն իր թևովը, օձն իր փորովը» հազիւ թէ կարող լինէին մերձենալ։ Զարմանալի՛ երկիր։ որ կողմը նայում ես՝ աւերակ, որ կողմը նայում ես՝ տաճար, որ կողմը նայում ես՝ մատուռ և ալր։ բայց բոլորն էլ կործանուած կամ կիսակործան, անտէր, անխնամ, ամալի։ Հարիւրաւոր կրօնաւորների փոխարէն այժմ միայն մողէսներն ու չղջիկներն են ել և մուտ անում ալդ սըրբազան և արիւնաներկ վալրերում։ Չերմ սրտերից բըզիսած աղօթքների փոխարէն չարագուշակ բուի ձայնն է

միայն լսում. ակամալ լիշում ես բանաստեղծի ճշգրիտ նկարագրութիւնը.

«Որ կողմը նայես տխուր տեսարան,  
«Որ կողմը դիտես աւերակ միայն  
«Կամ հրաշալի ոք. եկեղեցեաց  
«Կը տեսնես դու լոկ գմբէթը մնացած,  
«Կամ մեծակառոյց ի հիմանց ի վեր  
«Կիսաւեր կանգնած են ապարանքներ...»:

«Մայր Արաքսի» սրտալոյզ երգով մեր վերջին հրաժեշտը տուինք ալս նուիրական սրբավայրերին, որ տրխուր լիշատակներ էին արթնացնում մեր սրտերում: Արաքսի փոխարէն մեր առաջը հոսում էր նրա կրտսեր եղբայրներից մէկը, Զորագետը, որին վիճակուած էր ոչ պակաս տիսուր դեր կատարել. քանի՛, քանի՛ սրտաճմլիկ տեսարանների է անխօս վկայ եղել, քանի՛, քանի՛ անգամ է բռնադատուել կուլ տալու իր հարազատ որդոց արիւնը. քանի՛, քանի՛ աւարառութեանց և որածութեանց է տիսուր հանդիսատես եղել՝ իր գտրաւոր գոյութեան ընթացքում: «Արաքս, ինչու ձկանց հետ պար չես բռնում մանկական... Բայց զուր էինք Զորագետից պատասխան սպասում. նա կարծես աւելի ու աւելի էլ վրդովում, «մէջքը ուուցնում» և բարկանում մեզ, «խիզախ, անմիտ պատանիներիս վրայ, որ ավրդովում, նորոգում» ենք նրա բիւրաւոր ցաւերն ու վշտերը...»:

Տիսուր և տրտում քալերս ուղղեցինք դէպի վեր. բարձրանում ենք մի սարսափելի ապառաժուտ ճանապարհով, ուր եթէ ոտքը սահի՛ անդունդը կգլորուես. այդ քարերիցն էլ ազատուելով հասանք լեռնադաշտի եղբին, որ կոչւում է Հակառակամուտ:

Հակառակամուտ. հետաքրքրական անուն և ճիշտ որ այդ անունն իր հետաքրքրական պատմութիւնն ունի: Այս տեղը համարւում է այն պատմական վայրը, ուր հոչակաւոր Գրիգոր Տուտէորդի եպիսկոպոսը գլորել տուեց Մինաս եպիսկոպոսին իր ջորիներով. պատճառը հետևեալն էր. Զաքարէ և Խւանէ սպասալարները, որ վրաց արքունի ծառալութեան մէջ էին և մեծ հոչակ էին ստացել այդ միջոցին իրենց քաջագործութիւններուն:

ըով՝ թուղթ են գրում Յովհաննէս կաթուղիկոսին և  
Աւոն թագաւորին, որ իրենց թողլ տրուի զօրաբանակի  
մէջ ունենալ շարժական սեղան և խնդրում են նոյն-  
պէս, որ սր. Աստուածածնայ վերափոխման և սր. Խաչի  
տօներն էլ ըստ վրաց ծիսի կատարել տան իրենք։ Թա-  
գաւորը և Խաւեթ կաթողիկոսը ժողով են գումարում  
Սիս քաղաքում 1204 թուին այդ խնդրի առթիւ և  
միասին խորհրդակցելով՝ ուժը կանոններ են մշակում  
և ուղարկում Զաքարէ Եղիանին. իսկ Յովհաննէս կա-  
թուղիկոսը, որ Հոռմկայումն էր նստում, ուղարկում  
է եկեղեցանման մի շարժական վրան, մարմարեալ սե-  
ղանով և ալլ և ալլ եկեղեցական սպասներով, նմանա-  
պէս և մի եպիսկոպոս Մինաս անունով, քահանաների,  
գալիքների, սարկաւագների հետ միասին, որոնք գալով  
Լոռի քաղաքը՝ Ներկայանում են Զաքարէին և տալիս  
նրան կաթուղիկոսական ընծաններն ու հրամանաթուղ-  
թը։ Գալիս են նոյնպէս Խաւեթ կաթուղիկոսի ու թա-  
գաւորի գեսպանները և ներկայացնում ժողովի վճիռ-  
ները։ Զաքարէն ուրախանում է իր ցանկութիւնն իրա-  
գործուած տեսնելով և հրամայում է շուտով ժողով  
գումարել նշանաւոր եկեղեցականներից։ Սուի որոշում-  
ները վաւերացնելու և իրագործել տալու համար։ Ժո-  
ղովին ներկայ են լինում արևելեան նշանաւոր բարձ-  
րաստիճան Հոգևորականներ՝ ինչպէս օրինակ Հաղպատի-  
եպիսկոպոս Գրիգոր Տուտէորդին, Բջնու Արքանէս ե-  
պիսկ., Անւոյ աթոռակալ Սարգիս եպ., Կարուց Յով-  
հաննէս եպ. և ալլն. նոյնպէս և նշանաւոր վարդա-  
պետներ և վանահայրեր. ինչպէս օրինակ. Միթթար  
Գոշ, Իգնատիոս, Ստեփաննոս, Վարդան և Դաւեթ քո-  
րայրեցիք, Սանահնի վանահայր Յովհաննէս և բազմա-  
թիւ գիտնական քահանաներ ու աշխարհական անձինք։  
Երբ իմացուեց կաթուղիկոսի և թագաւորի հրամանի  
բովանդակութիւնը՝ ժողովականներից ոմանք ընդունե-  
ցին այդ, ոմանք մերժեցին, որից և խորվութիւն ծա-  
գեց և ժողովը ցրուեց՝ առանց մի որոշ եղակացու-  
թեան գուլու։ Այսեղ էր, որ Խաչատուր Տարօնեցին  
առաջին անգամ երգեց իր հեղինակած «Խորհուրդ Խո-

ըին» տաղը; Ալդ ժողովից յետոյ Զաքարէ իշխանը Մինաս եպիսկոպոսին ուղարկում է Հաղպատ, որ նոր կանոնների համաձայն պատարագ մատուցանէ: Գրիգոր Տուտէորդին լոելով նրա գալը, մարդիկ է ուղարկում նրա առաջ, որոնք բրերով ծեծում են նրա հետ եկած սլաշտօնեաներին, իրեն Մինասին մահամերձ վիրաւորում, իսկ ջորիներն իրենց բեռներով ձորն են գլորում և սատակեցնում: Մինասին ալդ դրութեամբ տանում են Զաքարէի մօտ, որ սաստիկ բարկանում և սկսում է հալածել Տուտէորդուն, բայց սա կարողանում է աղատուել նրա ձեռքից՝ փախչելով Կարսայ կողմերը: Ահա ալդ պատմական անցքից յետոյ այս վալը կոչւում է «Հակառակա մուտ», իսկ գրա շուրջն եղող հողերը մինչև այժմս էլ կոչւում են. «Հակառակալ հողեր»:

Այս աւանդական-պատմական վալը փոքր ինչ հանգստանալով՝ շարունակեցինք մեր ուղին գէպի Սահահին. մառախուղը հետզետէ սարերի գագաթներից ցած իշնելով՝ տարածւում էր և անձրև նախագուշակում: Վերջին անգամ երեսներս յետ դարձրինք՝ մի անգամ էլ տպաւորելու մեր սրտերում այսօրուակ տեսածները: Թէև ոսկեփալ արևը ծածկուած էր մոալլ ամպերի տակ, բայց և այնպէս գեղեցիկ էր տեսարանը: Չորագետը կարծես զալրացած՝ իր կատաղի ալիքները խփում էր մերթ ժայռի կրծքին, մերթ հաստաբուն ծառերին, հարուածում էր այս և այն կողմը և անդադար փրփուրի կոյտեր արձակելով առաջ էր գնում ոլորմոլոր ճանապարհներով: Ալիքների կատաղի աղաղակներին արձագանք էին տալիս դատարկ ալբերն ու կուսական անտառները:

Երբ հասանք Աստուածածնայ ձորի գլուխը, ամպերն աւելի խտացան, մառախուղը մօտեցաւ մեզ և մինչև «լսեչըրկուտ» հասնելն արդէն սկսեց անձրեւել: Անձրեւ մեզ առանձին գժգոհութիւն չպատճառեց, որովհետեւ համարեած թէ մօտեցել էինք մեր բնակարանին. զոյգ զոյգ կանգնեցինք և երգով ու երաժշտութեամբ մտանք գիւղը. ճանապարհին գիւղացիները սիրով ողջունում էին մեզ: Մտանք վանքի պարիսպը. ար-

գէն կէսօրից անց էր։ Ուրախ տրամադրութեամբ ցած գրինք մեր ուսերից մաղախները, հանեցինք տրեխները և մեր սովորական ամենօրեալ զգեստները հագնելով՝ հանգստացանք և համեմատութիւններ էինք անում Հաղպատի և Սանահնի վանքերի շինութեան և ճարտարապետութեան վերաբերութեամբ։ Այսպիսով վերջացաւ մեր չորեքօրեալ ճանապարհորդութիւնը՝ ժողնելով մեր սրտերում անջնջելի լիշտակներ։

### 17 Օֆոսպոսի, շաբաթ։ Սահահն։

Զբաղուած ենք Հաղպատի գիտողութիւնները գրի անցնելով. աշխատում ենք վերջացնել մինչև ամսում 20.ը, որովհետև որոշուած է արդէն, որ այդ օրն անպատճառ ճանապարհ պէտք է ընկնենք գէպի Տփխիս, Թէպէտ գժուարանում էինք բաժանուել այս սուրբ վայրերից և աշխատում էինք, որ մի քանի օր ևս կարողանանք ալսուել անցնել, բայց նշանակեալ օրից չենք կարող ուշանալ, որովհետև մեզնից մի քանիսը վերաքննութիւն ունէին։

Սանահնի լիշտակն աւելի խորը տպաւորելու համար մեր սրտերսում՝ ուխտել էինք, որ սբ. Աստուածածնայ տօնին անպատճառ ամենքս միատեղ այս պատմական սրբավայրում սբ. Հաղորդութիւն ընդունենք։ Այսօր է հէնց այդ տօնի նաւակատիքը. առաւոտեան ժամերգութիւնից յետոյ խոստովանուեցանք և սպասում էինք պատարագի սկսուելուն, Շուտով զանգերը հնչեցրին և սբ. պատարագն սկսուեց. պատարագիչն էր արժ. վանահայրը. մեր երգեցիկ խումբը երգում էր, մեզնից մի քանիսն էլ գպրութիւն էին տնում։ Եկեղեցին լի էր ուխտաւորներով և տեղացիներով։ Դաստիարակի և վերտակացուի հետ միասին ամենքս մեծ երկիւղածութեամբ մօտեցանք սբ. սեղանին և ճաշակեցինք Քրիստոսի արիւնն ու մարմինը՝ մեր սրտերում խոստանալով՝ կատարել Նրա պատուիրանները և հետևելով Նրա օրինակին՝ լինել համեօտ, հնազանդ, բարեբարոյ, աշխատասէր և ուսումնասէր։ Ճաշին մեզ սեղանակից.

էին՝ սրբազան Վարդան արքեպիսկոպոսը, արժ. վանահայրը, գիւղի քահանան և Որնակի ծխատէրը, որ եկել էր Սանահին խոստովանուելու, որպէս զի միւս օրը պատարագ մատուցանէ իրենց գիւղում։ Ուրախ և համեստ զուարճութեամբ անցկացրինք ալս օրը։

### 18 Օգոստոսի, կիրակի:

Այսօր սովորականից վաղ արթնացանք և վերկացանք, որովհետեւ սր. Աստուածածնայ տօնն է. շտապեցինք երեսներս լուանալու աղբրի սառնորակ ջրով, որպէս զի առաւտօտեան ժամերգութեանը ներկալ լինինք։ Բայց մեր շտապելը զուր էր. գիւղի կանալք ու աղջիկները մի մի կուժ ուսերին՝ հաւաքուել էին աղբրի գըլլիին. մէկը գալիս էր, միւսը գնում. հազիւ էր մեզ էլ մէկ մէկ հերթ հասնում։ Մի կերպ լուացուեցինք և շտապեցինք եկեղեցին. Եկեղեցին հետզհետէ լցւում է ուխտաւորների բազմութեամբ. պատարագից առաջ հանդիսաւոր երգեցողութեամբ վանքի սրբութիւնները դուրս բերին խորանից և կարգով բազմեցրին բեմի վրայ։ Պատարագն ու խաղողի օրհնութիւնը վերջացաւ. ուխտաւորները մի քանի հատիկ օրհնած խաղողից վերցնելով դուրս եկան և սկսեցին մորթել ու եփել իրենց բերած մատաղացուն և բաժանել։ Ուխտաւորների մեծամասնութիւնը մերձակալ գիւղերից լինելով՝ այսօր և եթվերադաշտան իրենց բնակավայրերը։ Պատարագի վերջը, երբ քահանան կարգում էր սր. աւետարանը, մի կին եկաւ և չոքեց քահանալի առաջ, լետոյ քահանալի հետ մտաւ խորանը և վերջինս էլ քահանալական զգեստ ու փիլոն չմնաց, որ չածէր նրա վրայ. մեր հարցմանը՝ թէ ինչ է նշանակում ալրդ, պատասխանեցին թէ ալդ կինը «հրեշտակակոխ» է եղել և ալդպիսով պէտք է բժշկուի։

Ճաշից լետոյ, երբ ուխտաւորներն արգէն ցրուել էին, մեզնից շատերն ըստ սովորականին, գաւթի նըստարանների վրայ նստած՝ գրում էինք. ներս մտաւ մի հասակաւոր կին և տեսնելով մեր պարապմունքը՝ զարմանքով ու հետաքրքրութեամբ հարցրեց թէ ինչ ենք

գրում. մեզնից մէկը պատասխանեց. երբ նա իմացաւ,  
որ մեր ճանապարհորդութիւնների մասին ենք գրում,  
ասաց. «ինչ որ լաւն է՝ էն կդրես, ինչ որ վատն է՝ էն  
մի գրիր, որդի». երբ մեզնից պատասխան ստացաւ՝ թէ  
ցայժմ գիւղացիներից բացի յարգանքից ու պատուից ո-  
չինչ վատ բան չենք իմացել, շարունակեց. «Աստուած  
տալ էդպէս լինի. Աստուած տալ, որ ուրախ սրտով գը-  
նաք մեր երկրից»:

### 19 Օգոստոսի, Երկուշաբերի:

Մեռելոցը մեր եկեղեցու աւանդական ծէսերից  
մէկն է, որ հաւատարմութեամբ պահպանել է թէ մեր  
եկեղեցին և թէ ժողովուրդը. ամեն մի պարտաճանաչ  
հայ իր պարտաւորութիւնն է համարում մեռելոց օրը օրհ-  
նել տալ իր հին ու նոր ննջեցելոց գերեզմանները. Որ-  
քան որ մարդկալին սիրտը, ժամանակի ընթացքում,  
բուժւում է մերձաւոր սիրելի անձանց մահուամբ պատ-  
ճառած խորին ու ծանր վշտերից, այնուամենալիւ մե-  
ռելոցի օրը լիշւում են շատ վաղեմի վշտեր ու արտօսըր-  
ներ. ահա այդ վերանորոգուած վշտերից թեթևանա-  
լու և ննջեցեալների վերջին մնացորդներին յարգանք  
մատուցանելու համար՝ օրհնել ենք տալիս ննջեցելոց  
գերեզմանները և «Աստուած ողորմի հոգուն» սրտասա-  
նում՝ մեր վշտացած սրտի խորքերից»:

Եթէ խորին վշտով համակուած և գլխներս կորաց-  
րած կանգնում ենք ամեն մէկս մի առանձին հողակոլ-  
տի առաջ և ողբում մեր ծնողի, եղբօր, քրոջ, ազգա-  
կանի, ընկերի ու բարեկամի լիշտակը, որքան առաւել  
է լինում վիշտը և ընդհանուր, երբ ամենքս միասին  
կանգնում ենք մի որոշ և անշուք դամբարանի առաջ,  
որի մէջ ամփոփուած աճիւնը չէ. պատկանում մեր ազ-  
գականին կամ բարեկամին, ալլ այնպիսի մի պատմական  
անձին, որի անունը դարից դար լիշւում և աւանդ-  
ւում է սերունդէ սերունդ. այսպիսի դամբարանը. մեզ  
մի անհատի կարճատև կեանքի հանգամանքները չէ  
լիշեցնում միայն, ալլ ամբողջ պատմական դէպէր և

ազգի ու հասարակութեան համար ճակատագրական ի-  
րողութիւններ, անջնջելի և անմռուանալի գործեր:

Դյլխարկներս ձեռքներիս, գլուխներս խոնարհած,  
շատերիս աչքերը արցունքով լի և տխուր հայեացքով՝  
կանգնած ենք երկու արքայական անշուք և խոտերով  
ծածկուած դամբարանների առաջը. Ո՞րքան տխուր լիշո-  
ղութիւններ. նրքան դառն է ճակատագրի խաղը. այն  
անձը, որ մի օր ամբողջ երկիր էր կառավարում, որի  
մէկ խօսքը բաւական էր ամբողջ ապարաններ և փա-  
ռաջէն տաճարներ կառուցանելու համար, որի համար  
ամենքը պատրաստ էին զոհել իրենց ինչքն ու անձը,  
ալսօր ամենքից մոռացուած, ամփոփուած է իր շինած  
հրաշակերա եկեղեցու պատի տակ. արշինաչափ բարձ-  
րութիւն ունեցող խոտն ու ճինճարը թագցը ել են ի-  
րենց մէջ դամբարանի տապանաքարը, որի վրայ գրոշ-  
մուած է արքայի անունը: Գուգարաց աշխարհի արքայ  
կիւրիկէի և նրա ամուսին թագուհու գերեզմաններն են,  
որ օրհնել ենք տալիս:

Սլսօրուայ տխուր լիշողութիւնները և դրանց ա-  
ռիթ տուող ննջեցեալների պատմական գործերը զբաղեց-  
րին մեկ մինչև ճաշ: Ճաշից յետոյ մի փոքր հանգստա-  
ցանք և սկսեցինք պատրաստութիւններ տեսնել վաղուան  
համար: Վաղը պէտք է վերջին հրաժեշտը տանք Սա-  
նահնին և ուղևորուենք գէպի Տփխիս. ալս հանգաման-  
քըն ևս առիթ տուեց մեր տխուր տրամադրութեան  
շարունակուելուն: Երկու ամսուալ ընթացքում ալնպէս  
սերտ սիրով էինք կապուել այս սուրբ վալրերի հետ,  
որ գժուար էր թւում մեզ նրանցից բաժանուիլը: Տը-  
խուր էինք, որ պէտք է թողնէինք այս գեղեցիկ տե-  
ղերը, որոնց հետ կապուած էին մեր ամենալաւ լիշո-  
ղութիւնները. ով ապրել է գիւղում, ով զգացել է գիւ-  
ղական անպաճոյն, պարզ կեանքի քաղցրութիւնը, ով  
ընդունել է գիւղացու սրտաբուղի հիւրասիրութիւնը,  
ով ապրել է բնութեան այս հրաշալիքների գրկում,  
զմալլել նրա գեղեցկութեամբ, գժուար թէ յօժարու-  
թեամբ բաժանուի ալդտեզզից, նա մանաւանդ երբ ալդ  
վալրերի ամեն մի անկիւնը անցեալ փառքի լիշողութիւն-

ներն է արթնացնում, երբ ամեն քալափոխում տեսնում ես նախնեացդ մեծագործ և հոյակապ շէնքերի աւրակները:

Տխուր էինք, որովհետև պէտք է թողնէինք հալըենիքի գեղապանծ լեռներն ու դաշտերը, հովիտներն ու ձորերը, խիտ, կուսական անտառներն ու խոխոջուն գետակներն ու առուակները. էլ չպէտք է խմէինք նրա սառնորակ տղիւրների քաղցրահամ ջրերը, չպէտք է ծծէինք նրա առողջարար և անոլշ օդը. ալ ևս չպէտք է տեսնէինք հայրենեաց լոիկ ու մնջիկ լիշտակարան. ները, նախնեաց սառը շիրիմներն ու հրաշակերտ ձեռագործները...:

## 20 Օգոստոսի, Երեւանի բնի:

Երկնքի ընդարձակ տարածութեան վրայ ալիքների նման լսղում էին պարզ ու սպիտակ ամառերը. արեւը վաղուց արդէն բարձրացել էր հորիզոնից և իր ոսկեփալլ ճոճանչները սփռել ամենայն կողմը. վանքի եկեղեցիների գմբէթների ոսկէգոյն խաչերը փալիին էին տալիս և նալողի աչքը խրաղըտեցնում: Գիւղն էլ վաղուց արթնացել էր. արդէն ծխում էին գիւղացիների թոնիրներն ու օջախները, որոնց գյխին կանգնած համեստ հարսները կերպուր էին պատրաստում: Իւրաքանչիւր գիւղական խրճիթի առաջ եղած կալերից ուրախ երգեր էին հնչում. կալողները խրախուսում, եռանդ էին ներշնչում կալում կամներին լծուած ձիաներին ու եղներին. «կալ արա, գարման արա, եզր ջան. դարմանը քեզ, ցորենն ինձ արա, եզր ջան»:

Վանքի պարիսպների շրջանակումն էլ անսովոր կենդանութիւն և իրարանցումն էր տիրում, մէկը բեռն էր կապում, միւսը ձիու վրայ բարձում, երրորդը արկղները միմեանց յարմարացնում, չորրորդը պարաները բերում, հինգերորդը հակները համարում և ալլն. մէկն էլ այդ բոլորին զանազան պատուէրներ ու հրահանգներ էր տալիս: Այդ բոլորը մեր ճանապարհորդա-

կան պատրաստութիւններն էին և հրահանգներ տուողը  
մեր վերակացուն էր:

Մեր բնակարանումն էլ վազուց արդէն ամենքը  
ոտքի էին. վերջին անգամ վանքի աղբիւրի սառնորակ  
ջրով երեսներս լուանալուց լետոյ՝ սկսեցինք մեր պատ-  
րաստութիւնները տեսնել. մէկը իր գրքերն էր կապում  
արկղի մէջ, երկըորդը մախաղը կարգի բերում, երրորդը  
զգեստները դարսում, չորրորդն իր սիրելի, բայց այժմ  
խղճալի դարձած տրեխների դարդն էր քաշում և ծա-  
կուած տեղերը կաշուի կտորներ դարսում, հինգերորդն  
լիշտակարանն էր պատրաստում ճանապարհի համար  
և մատիտի ծալրը սրում, վեցերորդը գլխարկի արևա-  
կալը կպցնում և ալլն. մէկ խօսքով ամենքս բանի էինք:

Մեր բեռների համար ընդամենը 7 ձի էր հարկա-  
ւոր մինչև Օձուն գիւղը, բայց դարձեալ մի ձի պակա-  
սեց. «տիրացու ջան, դիմում է գիւղացիներից մէկը մեզ,  
մի թեթև բեռն ա մնացել, համա ձի չի ճարւում, մի  
հարցրէք վըրժապետից, ես մի զօչաղ էշ ունիմ, կլ՛ որ  
նրա վրայ բարձենք»: Այդ մնացած բեռն էլ «զօչաղ»  
էշի վրայ բարձելով ճանապարհ ձգեցինք:

Երկու ժամից լետոյ մենք էլ ամենքս պատրաստ՝  
սպասում էինք դաստիարակի հրամանին. ճիշտ ժամի 9.ին  
հրաման տրուեց զոյտ զոյտ կանգնելու և դաստիարակը  
մի քանի ջերմ խօսքերով լայտնեց, որ թողնում ենք այս  
սրբազն վալրերը. հաղորդեց նոյնպէս մեր այս ճանա-  
պարհորդութեան ծրագիրը: Ապա մտանք Ամենափրկիչ  
եկեղեցին և ամենքս էլ մեծ երկիւղածութեամբ ու պատ-  
կառանքով շրմունքներս մօտեցրինք Մեծ Հալրապետի,  
Սքանչելագործ սբ. Գրիգոր Լուսաւորչի և սբ. Յով.  
հան Օձնեցու աջերին. վերջին անգամ կարօտով նայեցինք  
սբ. տաճարի ամեն մի անկիւնը՝ մեր սրտերում անջըն-  
ջելի տպաւորելու համար. վերջին. անգամ՝ հրաժեշտ  
տուինք լուռ արձաններին, սառը շիրիմներին ու խաչ-  
քարերին: Սրբազն Վարդան Արք-Եպիսկոպոսը շուրջա-  
ռը վրան ձգած՝ սբ. մասունքով պահպանիչ ասաց մեր  
գլխին և ապա շարունակեց. «Դուք էք ազգի ապագայ  
լուսը, աշխատեցէք և եղէք ազգի հաւատարիմ զաւակ-

ները. ուստան մէջ յառաջադիմեցէք. թէ այժմեանից ուսում շառնէք և չպատրաստուէք մեր ազգի համար, էլ ապագաի վրայ լուս չենք կարող ունենալ. Եղէք ներսէս Ե. կաթուղիկոսի արժանաւոր զատակները: Տէր ընդ ձեզ. բարով եկաք, բարով էլ գնաք. Աստուած ձեզ բարի ճանապարհ տալ. ողջ լինէք. օրհնեալ եղերուք, ամէն»: Շնորհակալութեամբ ծերունազարդ Սրբազնի աջը համբուրելով՝ դուրս եկանք եկեղեցուց: Բակում սպասում էին մեզ գիւղացիներից շատերը. չէր կարելի առանց զգացուելու լսել գիւղացիների ջերմ բարեմաղթութիւնները և սրտաբուղխ և բարժաք բարովք: Նրանք ցաւելով ասում էին. ձեր գնալը զդալի կլինի մեզ համար, ճանապարհորդութիւնների ժամանակ երբ դուք հեռանում էիք այստեղից, կարծես թէ գիւղը դատարկում էր. օրուայ ծանր աշխատանքից յետով ձեր երգերի քաղցր ձայնների տակ էինք հանգստանում. որքան ժամանակ է, որ կարգին խմբական երգեցողութիւն չէինք լսել եկեղեցում. դուք որ եկաք, կիրակի օրերը մեզ համար մեծ տօնի կերպարանք ստացան... և ալլն: Մենք շնորհակալութիւն էինք յալտնում և ցաւում, որ երկար չենք կարող մնալ: Գիւղացին առհասարակ չէ կեղծում, սրտի զգացածն է միայն խօսքով արտայայտում. միայն ցաւելով պէտք է տաել, որ ալդ գովելի վարքն ու բարքը մեծ և քաղաքից մօտ եղած գիւղերում հետզհետէ անյալտանում է. նախնի պարզ և համեստ կենցաղափարութեան տեղ բուն են դնում շռալութիւնը, նորաձեռութիւնը և ալլ քաղաքակրթուած ախտեր:

Վերջին անգամ հրաժեշտ տալով մեզ շրջապատող ներին, երաժշտութեան և քալլերգի որոտընդուստ հընչվեններով դուրս եկանք վանքի պարսպից և գիւղի միջով ուղևորուեցինք դէպի ձորի զլուխը. բոլոր գիւղացիները, մեծ թէ փոքր, դուրս էին եկել իրենց կտլերը և յարգանքով ողջունում և ընդունում էին մեր ամնաք բարովքները: Գիւղից գեռ չգուրս եկած՝ մի ձայն լսեցինք և լետ նալելով տեսանք, որ ետևներիցս վազում է գիւղի քահանան, ծեր Տէր Յովհաննէսը. նա փարացան մի կողմը ձգած, թևերը վեր քաշած, գլխին մի թե-

թե աղլուխ կտպած, արևի կեզիչ ճառագալթների տակ  
կալ էր կալսում և մեզ տեսնելով՝ գալիս էր հրաժեշտ  
տալու:

Տէր հալը չնալելով էր հասակին, նա մօտ 70 ա-  
մեալ ծերունի էր, դեռ չէր կրում էր վրալ ծերութեան  
կնիքը, նրա մազերը դեռ ևս բոլորովին չէին սպիտա-  
կել. նրա գէմքին նալողը 45 50 տարեկան կկարծէր:  
Թէւ մէջքը մի փոքր ծոռւել էր, բայց կնճռոտած ճա-  
կատը և արևեց ալրուած ու սեացած երեսը համակրելի  
էր. գէմքն օժտուած էր հայկական քթով. ձեռքերը  
ջլոտ և սոկրակազմ էին: Նա իր որդու հետ միտսին  
մօտենալով մեզ՝ «պահպանիչ» և «Տէր ուղղեա» ասաց  
և բարի ճանապարհ մաղթեց մեզ. երբ համբուրում էինք  
ծերունի քահանալի աջը և հեռանում, նրա աչքերի մէջ  
արտօսըներ երևացին: Մենք նորից հնչեցնելով մեր  
քալերգը, շարունակեցինք մեր ուղին և շուտով հասանք  
ձորի գլուխը, որտեղից մի վերջին անգամ էլ հայեացք  
ձգեցինք վանքի ու գիւղի վրալ և սկսեցինք ցած իջնել  
գէպի ձորը. հետզհետէ ծածկուեցան մեր աչքից վան-  
քը, գիւղը, անտառապատ լեռները և մենք մեզ զգա-  
ցինք գէպի ձորն իջնող ժայռերի մէջ: Թէպէտ շատ ան-  
գում էինք իջել ու բարձրացեւ այս ժայռութ քարկապ-  
ները, բայց երբէք այնքան գեղեցիկ չէր թուացել մեզ,  
ինչպէս այս անգամ: Այս նեղ շաղի դժուարագնացութեան  
հետ վազուց արդէն հաշտուած լինելով՝ արագ ցած ի-  
ջանք և անցնելով նանալի կամուրջը՝ հանգստացանք  
Զորագետի միւս ափին գտնուող ընկուգենու ստուե-  
րում: Ադ միջոցին դաստիարակը մի փոքր լետ էր մնա-  
ցել և դիտում էր կրկին, արդէն մի քանի անգամ խրմ-  
բովին դիտած, նանալի հրաշակերտ, հնադարեան և  
կամարակապ կամուրջը, որի լայնածաւալ կամարի տա-  
կով ահոելի դղրդիւնով անցնում վազում է Զորագետը  
կամ Դէբէտը: Մենք ուղեցինք առիթից օգուտ քաղել  
և խորհրդակցելով՝ վճռեցինք ուրախ ցոյցերով ընդու-  
նել նրան. Հէնց կամուրջն անցաւ նա թէ չէ, ամենքս  
«կեցցէ» աղաղակներով ու հրացանաձգութեամբ դիմա-  
ւորեցինք նրան և ուրախ բացագանչութիւններով մեր

մէջ առանք.. : Կէս ժամի չափ ընկուզենու ստուերում հանգստանալուց և զուարճանալուց յետոյ՝ դիմեցինք մօտիկ գտնուող, մեր դպրոցի նախկին սան, պ. Միկայ Արդութեանի ալգին, ուր Սանահնի արժ. վանահալր Գեղամ վարդապետը հրաժեշտի ճաշ էր պատրաստել մեղ համար:

Դորագետի ափերին են տարածուած Սանահնի ալգիները. գիւղացիների արգեանց աղբեւրներից մէկն էլ ալգին է. բայց մեծ մասամբ խնամքով չեն պահւում. պտղատու ծառերից իրենց քանակութեամբ առաջին տեղն են բունում դամբուլի, ծիրանի, տանձի, խնձորի, դեղձի և թթի ծառերը. խաղողը մինչև սեպտեմբեր հազիւ է հասնում և ալնքան էլ քաղցր չէ լինում. ալգու տէրերը շահւում են ալդ պտուզները և բանջարեղէններ ծախելով. գինի շատ չէ լինում և թթու է:

Նստեցինք ալդու մեծ թթենու ստուերի տակ. սփոռցի տեղ գետնի վրայ տարածեցինք ընկուզենու լայն տերևները և վրան դարսեցինք հաց ու պանիրը և այլ Աստուծոյ տուած կերակուրները. ալդ միջոցին լանկարծ մեր առաջը տնկուց մի կիսամերկ ծերուկ և դաստիարակի առաջը դրեց մի շարան թարմ ձուկը և փէշքաշ առ ասելով. նա հազած ունէր մի վարտիկ և մի պատառոտած չուփայ, որի տակից երևում էր նրա լաղթանդամ մարմինը. գլխին հագած ունէր մի հնացած, կարմիր տաճկական ֆէս: Դա Սանահնի դալլաքն էր և ալդ ձուկն էլ որաալով Զորագետում պատուեց մեզ: Ճաշը բաւականին ուրախ անցաւ. Փորած վարունգը, որ ծառալում էր գինու բաժակի տեղ, մի քանի պտուտներ արաւ, որի միջոցին անպակաս էին կենացներն ու բարեմաղթութիւնները: Երբ դաստիարակի կենացն առաջարկուեց, նա բաժակ ի ձեռին մօտաւորապէս հետևեալն արտասանեց. «Միքելի՛ սաներ, սրտանց շնորհակալ եմ ձեզնից. դուք մեր այս առաջին դպրոցական ճանապարհորդութեան ընթացքում վարուեցիք գիտակցօրէն և ամեն տեղ ձեզ լաւ պահեցիք, թէպէտ ձեզնից մի քանիսը սկզբում, կարգապահութեան ընտելացած չլինելով, մի փոքր խանգարում էին ընդհանուր

դիսցիպլինան, բայց նրանք էլ շուտով զգաստացան և կրենց ընկերների բարի օրինակին հետևեցին։ Ճանապարհորդութեան և նա մանաւանդ խմբովին ճանապարհորդութեանց միջոցին ամենաառաջին պայմանը յաջող կերպիւ նպասակին հասնելու համար՝ ընդհանուր կարգապահութիւնն է։ Եթէ կարգապահութիւնը իսանդարուի և ամեն մէկն ուզենալ իր ցանկացածն անել, ոչինչ չի դուրս գալ։ Ձեր կարգապահութիւնն անհրաժեշտ էր նաև մի ուրիշ տեսակէտից. դուք շրջում էք հալ ժողովրդի գիւղական դասակարգի մէջ, որ որքան բարեսիրտ և անկեղծ է, այնքան էլ տգէտ և յետ մնացած. ահա դրանք պէտք է ձեր կարգապահութիւնը տեսնելով՝ օրինակ առնէին ձեզնից, որովհետև տգէտ և անզարգացած անձի վրայ ամենից առաւել օրինակն է ազդում. ես անկեղծ կերպով հաւատացած եմ, որ եթէ ձեր ընդհանուր կարգապահութիւնը չլինէր, դուք մեր հայրենակից գիւղացիների յարգանքը չէիք կարող վայելել ալն չափով, որչափով որ բարեբաղդաբար վայելեցիք ամոն տեղ. Դուք ձեր վայելուչ դիրքով, դէպի հայկական սրբութիւններն ու տաճարները տածած պատկառանքով՝ ամեն տեղ գրաւեցիք գիւղացոց համակրութիւնը. Նրանք տեսնելով ձեր, այսպէս ասած, ուսում առած քաղաքացիների վերաբերմունքը՝ դէպի տեղական սրբութիւնները, աւելի ևս խրախուսուում էին իրենց աւանդական և կարծես թէ բնազդման շնորհիւ տածած երկիւղածութեան և պատկառանքի զգացմունքների համար։

Այս ճանապարհորդութիւնների միջոցին դուք առիթ ունեցաք անձամբ տեսնելու և շօշափելու այն սրբազն վայրերը, որոնց անունները սովորել էիք հայոց և եկեղեցական պատմութեան դասընթացում. այն անունները, որ բիւրաւոր ուրիշ անունների հետ ի միասին իբրև լոկ բառեր էին ներկայանում ձեր լիշտութեան մէջ, այժմ մարմնացած և կենդանի պատկերներ դարձան ձեզ համար և երբէք չէք մոռանալ. այն պատմական անձանց գործերը, որոնց դամբարանները ձեր աչքով տեսաք, այլ ևս չեն ջնջուի ձեր լիշտ-

զութիւնից: Այժմ ձեր հալրենիքի մի մասի, Գուգարաց աշխարհի մասին խօսելիս կամ կարդալիս ձեր աչքի առաջ չի ներկայանալ քարտէզի մի անկիւնը, այլ իսկական հողն ու լեռը, գետն ու գաշտը, գիւղն ու վանքը, գիւղին և իր քրտնաթոր աշխատանքը:

Այս ճանապարհորդութիւնն առաջին կազմակերպուած դպրոցական ճանապարհորդութիւնն է Կովկասում, ուսանող ժամանակս ես մասնակցել եմ այդպիսի ճանապարհորդութեանց Եւրոպալում. ճիշտ է այդ միջոցին ոտքերս քայլում էին Եւրոպական հողի ու սարի վրայ, խօսւմ էի նրանց սառնորակ աղբիւրների ջրերը, զուարճանում էի այնտեղի բնութեան հրաշալեքներով, սակայն սիրոս ու հոգիս միշտ պտտում էր իմ հայրենիքի սարերում ու գաշտերում, միտքս միշտ մեր հայրենեաց պատմական լիշտակարաններով էր զբաղուած. ամեն անգամ հառաջանք արձակելով մըմնջում էի. ախ, արդեօք կգալ մի օր, որ ես էլ իմ սաների հետ ալսպիսի կազմակերպութեամբ շրջեմ մեր հայրենիքի բարձրաբերձ լեռները, ծաղկալից դաշտերը, անգնդախոր ձորերն ու կանաչազարդ հովիտները. արդեօք կարժանանամ առաջնորդելու հայ պատանիներին դէպի իրենց հայրենի սրբութիւններն ու պատմական վայրերը...: Ուսանողական այդ իդս կատարուեց. առաջին փորձն եղաւ և անկեղծ շնորհակալ եմ ձեզնից, որ դուք էլ ձեր լաւ վարմունքով նպաստեցիք առաջին փորձի լաջող ելք ունենալուն: Տա Աստուած, որ երկրորդ փորձն աւելի արդիւնաւոր լինի և աւելի լաջող հետևանքներ ունենայ. տա Աստուած, որ ձեզնց շատերն էլ ապագայում իրենց սաներին առաջնորդեն դէպի այս սրբազան լիշտակարանները...:

Դաստիարակն իր խօսքը վերջացրեց թէ չէ. օդը դղրդաց մեր լիաբուռն շնորհակալութեանց արտալարտութիւններով: Մեզնից ամեն մէկն ուրախ էր, որ մասնակցել է այս գործի սկզբնաւորութեանը:

Ժամի Ցն էր, որ ճաշը վերջացրինք: Այդ միջո՞ցին Ուզունլարի կողմից մի կոյտ մոխրագոյն ամպերքամուցը քշուելով՝ դիմում էին դէպի մեզ. շտապեցինք

կանապարհ ընկնելու։ Ենորհակալութիւն յատնելով ալգու տիրոջը, մեզ հիւրասիրող արժ։ վանահօրը, ալդուց գուրս եկանք և քալերս ուղղեցինք դէպի Օձում. գնում ենք Զորագետի ափով, ալգիների միջով։

Զորագետի տլիքներն սկսում են կամաց կամաց պղտորուել, նշանակում է արձեն արգէն սկսուել է բարձրում. գետը կարծես բարկանալով այդ հանգամանքից՝ կատաղել է և լայն բացած բերանով մռնչալով ու գոչելով առաջ է շտապում՝ սպասելով երկնքից թափուած ջրերին, որ իր ալիքներն աւելի ուղցնելով, նոր ոլժերով կուլ մզէ իրեն շրջապատող լեռների հետ, որոնք սեղմելով նրան իրենց ժայռոտ և նեղ կրծքում, զսպում են նրա անվերջ քմահաճութիւնները։ Նա անդադար հարուածներ է տալիս այս ու այն կողմը, դալարում, մոնչում է ինչպէս մի վիշապ և հասնելով տափարակին՝ հազիւ հանդարտում է և ինչպէս կապանքներից ազատուած մի բանտարկեալ, իրեն ազատ զգալով՝ աշխատում է տարածել թևերը և ըստ կարելոյն ընդարձակ տեղ բռնել։ Ամպերն սկսեցին գոռգուալ. նրանց խույ աղաղակն երկար արձագանք գտաւ խոր ձորի մէջ. անձրեկի կաթիլները քանի գնում խոշորանում և սկսում էին աւելի արագութեամբ թափուել։ Մէջքերիս կապած վերարկուներս լետ անելով՝ հագանք և առանց ուշադրութիւն դարձնելու տեղատարափ անձեւի վրայ՝ շարունակեցինք մեր ճանապարհը։ Ճանապարհին պատահում էին մեզ սարուորներ, որ տաւարն առաջ արած, փալաս, փուլուս, տաշտեր, պղինձներ և ալին էշերի ու եզների վրայ բարձած՝ վրան էլ փոքրիկ երեխաներին նստեցրած՝ սարից գիւղն էին իշնում։

Քոմին սկսեց փչել և ամպերը դէս ու դէն ցըրուել. անձրեւը դադարեց, երկինքը պարզուեց։ Արեւն իր բոլոր ոլժը հաւաքելով պայծառ կերպով լուսաւորեց սարերի գագաթները. մենք բարձրանում էինք դէպի վեր՝ լեռնալին բաւականին դժուարագնաց շաւիղներով, մինչեւ որ հասանք ձորի գլուխը և խաչքարի մօտ մի փոքր հանգստանալով՝ շարունակեցինք մեր

ճանապարհը դէպի գիւղը, նորից սկսեց անձրեւել և  
մենք էլ կրկին զերարկուների մէջ փաթաթուելով՝ հա-  
սանք «կնդարար» աղբւրը, սառը ջուր խմեցինք և դի-  
մեցինք ուղիղ դէպի «խաչգունդ» եկեղեցին. դիտեցինք,  
ներկայ եղանք ժամերգութեանը, նկարագրեցինք կո-  
թող արձանը և արդէն մութն ընկել էր, երբ դիմեցինք  
Տէր. Յովհաննէս քահանալի տունը և տիսորժակով վայե-  
լելով հաց ու պանիրը՝ պառկեցինք մեր խոնջացած ան-  
դամներին հանգստութիւն տալու:

### 21 Օգոստոսի, չորեկշաբթի. Ուսուաբ:

Դեռ լուսը չքացուած, անթիւ ու անհամար երկ-  
նալին լապտերները ծփում էին երկնից կապուտակ և  
անսահման եթերի մէջ. լուս էր ընութիւնը և բաւա  
կանին ցուրտ: Ժամի 3 էր, որ վեր կացանք և սկսեցինք  
մեր իրեղէնները դարսել Փուրգոնում, որպէս զի արեւը  
գեռ չծագած ճանապարհ ընկնենք. աստղերն սկսեցին  
հետզհետէ անլայտանալ. մութն իբրև մի քող քիչ քիչ  
սկսում էր բարձրանալ երկրի երեսից և վերջապէս ա-  
րևելքը բոցավառուեց և լերանց միգապատ գագաթնե-  
րըն սկսեցին լուսաւորուել: Ժամի 4<sup>1/2</sup>, էր արդէն, երբ  
մեր ֆուրգոնները տեղից շարժուեցին: Սանահնի վա-  
նահայր Գեղամ վարդապետը, որ ուղեկցել էր մեզ մին-  
չև այստեղ, հրաժեշտ տուեց և ինքն էլ ձիով ուղևոր-  
ուեց դէպի սբ. Եջմիածին, որովհետեւ մի քանի օր ա-  
ռաջ ալնտեղից «թուանքչի» էր եկել՝ հալը սուրբին տա-  
նելու՝ մի ինչ որ գործի համար:

Դուրս եկանք գիւղից և Փուրգոններն անցնում են  
հնձած արտերի միջով. արևի ծագմանը դիմաւորեցինք  
Ներսէս Շնորհալու սրտառուչ «Առաւոտ լուսոյ, արե-  
գակն արդար».. Հոգենուագ երգով. տպաւութիւնն ու  
մեր ներքին զգացմունքն աննկարագրելի էր...: Խնչ  
թարմութիւն է բուրում դաշտում, արտերը հնձուած  
են և ոչ մի ծաղիկ չէ երևում, բայց ալնուամենալիւ  
բուրում է, զով և կենսատու հով է փչում, Արևի ճա-  
ռագալթները լերանց բարձր կատարները ուկեղոծելով՝

Հետզետէ աւելի ցածրանում, տարածւում են ընդարձակ գաշտերի վրայ և վերջապէս թափանցում են նաև անդախոր ձորերը: Հեռու, դէպի արևելք, երկար ու բարակ ծուխեր են բարձրանում և երեսում է մի մեծ գիւղ. դա սքանչելի դիրք ունեցող Դսեղն է, Լոռու քաջերի հայրենիքը: Ահա մեր առաջն են Իգահատն ու Արդուին. ոչխարի հոտերն արածում են շաղաթաթախ խոտը, իսկ փաքրիկ հովիւները ցնցոտիներով ծածկուած նստոտել են խոնաւ և ցուրտ գետնի վրայ և հետաքըրքը քրութեամբ նալում են մեզ: Գիւղերումն էլ արդէն ըսկըսուել է շարժումն ու կենդանութիւն: կանալք ու աղջկերքը պղնձեալ մեծ սափորները կամ փայտեալ կուժերն ուսերին և կիսամերկ տղալք հաւաքուել են գիւղեց դուրս գտնուող աղբիւրի գլխին: Ալդ երկու գիւղերն էլ ծածկուեցան մեր աչքից. անցնում ենք Զորագետի աջ ափով. ձորի ափին հետզհետէ երեսում են Դսեղ, Ծաթեր, Զորագեղ, Կուրդան գիւղերը, կարծես թէ վերջին հրաժեշտն առնելու մեզնից, որոնց հետ մենք կապուած ենք սիրուն ու անմոռանալի յիշատակներով: Անցնում ենք Մղարթ գիւղի տակով և հեռուում երեսում է գեղեցկանիստ Վարդարլուը. մօտենալով Կողէս լունաբնակ գիւղին՝ աւելի պարզ է երեսում Վարդարլուրնիր շրջակայ գիւղերով: Գիւղագարակ, Հոբարձի, Գեառգեառ: Ալսեղ մեզ պատահեցին հայ զինուորներ երևանեան գնդից. սրանք ամառը Զալալօղի լինելով՝ մասնակցել էին զօրախաղերին, որ տեղի էին ունեցել երէկ և շարունակուում էին այսօր ևս. հեռուից լսում էին թնդանօթի խուլ ձալները: Երբ բլուրը բարձրացանք՝ ամբողջ զօրաբանակը մեր աչքի առաջն էր. անսովոր լինելով այս տեսարանին, մի բոպէ չգիտէինք թէ ո՞ր կողմը նալինք: Միմեանց դէմ կանգնուծ են երկու կարգ զինուորներ և կուռում են. անդադար հրացան են արձակում. մի կողմը հետզհետէ տեղի է տալիս, իսկ միւսը՝ առաջ է գընում. ամեն մի կողմն աշխատում է յարմար գիրք բըռնել՝ յաղթութիւն տանելու համար: Հակառակ կողմը տեսնելով, որ թշնամին յարմար գիրք բոնեց՝ առաջ է դիմում և սկսում պատերազմը. երկու կողմերն էլ իրար լուսնե ու.

են խառնւում, Անընդհատ արձակօւող թնդանօթներին արձագանք են տալիս լեռները. ծուխն ամպի պէս շարունակ վեր է բարձրանում. շարունակ լաւում են հրացանների ճայթիւնը և սրերի շառաչիւնը. զինուորները քիչ քիչ առաջ գնալով շարունակ նստում, պառկում և կամ կանգնած են նշան գնում: Պողպատեալ սուխները փալում են արեգակի ճառագալթների տակ և նալողի աչքերը խրտղտեցնում: Զօրքի մի կողմը թուլանալով իր վերջին ճիգն է թափում և փախուստ տալիս. ոը բաձիգ զինուորներն ամեն ջանք գործ են դնում, որ թնդանօթները թշնամու ձեռքը չձգեն. վերջն ուժապառ լինելով հեծելազօրքն են օգնութեան կանչում, բայց հակառակորդների հեծելազօրն էլ վրայ հասնելով սրանց մէջ է կոփւը տաքանում: Յաղթուողները դէպի Լուու բերդն են դիմում, յաղթողներն էլ նրանց լետեկից են վազում: Թշնամին աշխատում է վերցնել բերդը. ներսից պաշտպաններում են: Բերդի պարիսպների տակ սպիտակին է տալիս գնդապետի վրանը:

Այս մեզ համար անսովոր և հետաքրքրական տեսարանը բաւականին զբաղեցրեց մեզ: Սա միայն խաղ էր. բայց որքան սարսափելի պէտք է լինի խսկական պատերազմը. մտաբերելով արգէն՝ մարդուս ակամայ սարսուռ է պատում. չէ որ այդ աչք խրտեցնող փալլուն նիզակներն ու սրերը պէտք է ներկուած լինին զուտ մարդկալին արիւնով. չէ որ ամեն մի թնդանօթի և հրացանի թնդիւնի հետ պէտք է միախառնուին հարիւրաւոր մեզ պէս մարդկանց հառաչանքներն ու հեծկլտոցները....:

Ահա անցնում են մեր մօռով մի խումբ հայ զինուորներ, որոնք յաղթողներից են. չնայելով արևելի կիզիչ ճառագալթներին՝ բոլորն էլ հագած ունեն բըրդեալ բաճկոններ և բըրդեալ գլխարկներ. մէջքերին ամրացրած զինուորական պայուսակը. բոլորն էլ չուստ կամ տրեխ ունին ստքերին: Իրենց պատմելով հրացանաձութեան մէջ հայ զինուորները միշտ առաջին մըրցանակն ու պարգևներն են ստանում. մանաւանդ Լոռեցի հայ զինուորները հմուտ են այդ բանին՝ նախա-

պէս՝ վարժուած լինելով իրենց կուսական անտառներում հրացաններով որսի՝ գնալուն Այս իրողութիւնը վկայեց նսեւ այն ռուս սպան, որ ճանապարհին մի փոքր տեղ նստեց մեր Փուրգոնը և մեզ հետ զըուցաւրում էր:

Կէս ժամաշափ էլ շարունակելով մեր ուղին՝ հասանք ռուսաբնակ Ալէքսանդրովկալ գիւղը: Երկու ժամ մնացինք «Փուրգոնչու» տանը, ճաշեցինք և մի փոքր հանգստացանք: Տունը փայտաշէն էր և ընդարձակ բակով. մեր իջևանած սենեակի մի անկիւնում ռուսական մեծ վառարանն էր, իսկ դրա դիմացի անկիւնում բազմեցրած էր սրբի պատկերը՝ առաջն էլ կանթեղ: Տան առաջը գտնւում էր ահազին փայտեալ շտեմարանը, որ տախտակներով մի քանի մասերի էր բաժանուած և իւրաքանչիւր բաժանմունքը յատկացրած էր մի որոշ տեսակ հացահատիկի համար. ցորեն, գարի, կորեկ և աճար կար շտեմարանում: Շտեմարանի առաջն ընկած էին մի քանի եւրոպական գութաններ. այս կողմի համարեալ թէ բոլոր ռուս գիւղացիներն ալդպիսի գութաններ են գործածում, իսկ հայերն առանց բացառութեան գեռ ևս իրենց հնադարեան և ծանը գութանով են հերկում գետինը: Երբ մի անգամ առկիթեղաւ հայ գիւղացիներին հարցնելու՝ թէ ինչո՞ւ իրենք էլ եւրոպական գութան չեն գործածում, պատասխանեցին. մենք էլ փորձեցինք նրանցով վարել, բայց տեսանք, որ ձեռք չիտալիս մեր հողում. քարի գիւղչելով շուտով կոտրուում է և մենք էլ չենք կարողանում նորոգել: Իսկ երբ հայ գիւղացին մի բանի մասին աննըպաստ կարծիք է կազմում, այնու հետեւ ինչքան կամենաս խօսի, համոզի, նրա համար միւնուն. է, նա այլ ևս ոչ ոքի չի լի: Բայց պէտք է նկատել, որ նիւթական կողմն էլ նշանակութիւն ունի ալստեղ: Եւրոպական գութանը թանկ է, իսկ տեղական ձեփ գութանը գիւղացին ինքն է շինում: Այստեղ խոտի գէզերը հայաբնակ գիւղերի պէս տների կողքին չէին դարսուած, այլ գիւղեց գուրս՝ առանձին տեղ:

Փամի 4 էր, որ նորից ճանապարհ ընկանք գէպի

Ուռուտ գիւղը, ուր պէտք է իշեանէինք և մնալինք այս գիշեր, որովհետեւ նախապէս հրաւիրել էր մեղ տեղացի երիտասարդ պ. Արշակ Պապեանը: ճանապարհը հարթ էր և անցնում էինք գեղեցիկ դաշտավայրել միջով. չորս կողմը տարածւում էին կանաչազարդ բլուրներ: Երեկոյեան գէմ, երբ արեգակը թեքուել էր գէպի իր մուտքը, անցանք Միսխանալ կոչուած փոքրիկ գետակը. երեաց նոյնպէս Ուռուտ գիւղը մի սիրուն կանաչազարդ բլրի ստորոտում. գրանից ոչ շատ հեռու, մի ուրիշ բլրի ստորոտին երեւում էր Նալդարբէգ գիւղը Ուռուտ գիւղի տեսքը հեռուից բաւականին գեղեցիկ էր. քիչ թէ շատ միաձեռւթիւն է պահպանուած և տանիքները կղմինտրով են ծածկուած. առ հասարակ տարբերում է սովորական հայ գիւղերի տիպից և իսկոյն նշանաբար նշանակ գիւղերի ազգեցութիւնը:

Երբ երգելով ու երաժշտութեամբ անցնում էինք գիւղի միջով մեզ դիմաւորեց վերոյիշեալ պ. Ա. Պ. և առաջնորդեց գէպի իրենց տուն: Հասնելով մեր իշեանը, մի փոքր հանգստացանք և իշանք Ուռուտ գետակի ափը. գետակի վրա չգուած էր մի գերան, որ կամուրջի տեղ էր ծառալում: Ալդտեղից վերադառնալով մեր իշեանը, զոյտ զոյտ կանգնեցինք և դաստիարակի ու մի քանի ուսուցիչների ուղեցութեամբ (որոնք եկել էին Զալալօղուց) դիմեցինք գէպի գիւղի եկեղեցին: Մեզ հետ էին նոյնպէս գիւղի տանուտէրն ու մի քանի գիւղականներ:

Նախկին եկեղեցին քանդուած և նորն էր շինուած նրա տեղը՝ մի բարձր թումբի վրայ. նոր շէնքն ամբողջովին քարեց է. շինել են ժողովրդական ճարտարապետները՝ օրինակ վերցնելով Օձունի եկեղեցու ձևից: Պատուհանները նեղ և փոքր լինելով՝ ներսը մութն էր: Եկեղեցին գեռ կիսակատար է և ժամերգութիւն չէ լինում: Նինութեանը վերահսկում էր գիւղի երիտասարդ տանուտէրը Գիւղն ունենալով 50 տուն բնակիչ՝ միդաւան գպրոց է պահուած. ուսուցիչը մեր գպրոցի ուսումնաւարտներից էր եղել անցեալ տարի. գիւղացիները գոհ էին նրանից և յաջորդ տարուալ համար էլ հրաւիրեց

էին նրան։ Ի նկատի պէտք է ունենալ այն հանգամանքը, որ գիւղացիներն ուշադրութիւն չեն դարձնում այնքան ուսուցչի գիտութեան վրայ—չեն էլ կարող—որքան նրա վարք ու բարքի վրայ. եթէ ուսուցիչը համեստ, քաղցրաբարոյ մարդ է, չի խորշում գիւղացուց, նրա սովորութիւններից ու կենցաղից, գիւղացին էլ լիովին հաւատ է ընծալում նրան, նրա խօսքն ընդունում և շատ դէպքերում օգուտէ քաղում նրա խորհուրդներից։

Մութն ընկնում էր արգէն, երբ մեր գիտողութիւնները վերջացնելով՝ երգելով վերադարձանք մեր իջևանը, կաթնով ու կարկանդակով թէլն վալելեցինք և դուրս եկանք սենեակից։ Արգէն գիշեր էր և մեր շուրջ խորին լուսութիւն էր տիրում. գիւղացիք ցերեկուալ աշխատանքից լետոյ հանգստանում էին։ Միայն մեր երգի ձայնն էր տարածում տիրապետող լոսութեան մէջ։ Երգելու միջոցին դաստիարակի և միւս գաւառական ուսուցիչների մէջ խօսք եղաւ ժողովրդական բանաստեղծութեան մասին և ուսուցիչներից մէկն իբրև նմուշ առաջ ըերեց լուսեցոց հետևեալ ժողովրդական երգերը։

## Դ Ա Ն . Դ Ա Ն

(Երեխալին զբաղեցնելու երգ)։

«Դան—դան—դան որդի,  
 «Իմ Ըրեանայ խան որդի,  
 «Թաւրըզու թաւթա (?) որդի  
 «Շամախու փարչա որդի։  
 «Դան—դան դանեցի  
 «Բերանդ եկեղեցի,  
 «Տուն եկայ համբուրեցի  
 «Դուս եկայ բարովեցի։  
 «Հայ եկամ բարով առվի,  
 «Թուրք եկաւ քարով տուի։  
 «Դան—դան դի առնես  
 «Կանանչ բաղի խիարն ես,  
 «Մամի ջէրի խուրմէն ես  
 «Գէղի աչքի սուրմէն ես։

«Դան—դան դնդոց ես  
 «Մեղրով լիքը քթոց ես.  
 «Սըռնաղբրի շուազն ես  
 «Ալ ոչխարի դմակն ես.  
 «Մութ գիշերուայ ճրագն ես  
 «Դրնդէղի կրակն ես»:

## Օ Ր Օ Ր Ո Ց Ի Ե Ր Գ

«Նանի—նանի, իմ որդի,  
 «Քունդ տանի, իմ որդի.  
 «Նանա—նանա, նանով ըլիս,  
 «Ապրիս ու սաղ ջանով ըլիս:  
 «Իմ ըրեխի քունը տանի  
 «Սրա դուշմանին շունը տանի.  
 «Իմ ըրեխէն քուն ունի,  
 «Սովորմաքալ (?) տուն ունի:  
 «Քանի ջուրը ալին տայ  
 «Սրա դուշմանին քարին տայ.  
 «Քանի ջուրը փրփրի  
 «Սրա դուշմանը քրքրուի.

## Զ Ա Հ Ր Ի Ե Ր Գ

(Ճախարակի երգ).

«Մանի, մանի, իմ ջահրա  
 «Քարուանդ բանի իմ ջահրա-  
 «Իմ ջահրէն բան ա նստել  
 «Ումոււկով ջան ա նստել.  
 «Աստղերը դուս ա եկել  
 «Աչքերիս լուս ա եկել.  
 «Մանեմ, մանեմ, մտիկ կանեմ  
 «Մեծ մեծ ոստեր կծիկ կանեմ:  
 «Ըղաքիդ չոքած դուկ ունիս  
 «Կողմիդ ալմաս թուր ունիս,  
 «Որը մի մախալ եղ ունիս:  
 «Մանողիդ գլխին տեղ ունիս:

•Մանի, մանի, իմ ջահրա  
Ժմ ու քու բանը շատ, ջահրա: և այլն:

Այս հետաքրքրական զրուցատրութեան միջոցին հիւրասէր տանտէրն ընթրէքի կանչեց մեզ. ներս մը. տանք ընդարձակ սենեակը և զարմանքով տեսանք մի ճոխ սեղան իր բոլոր պարագաներով, որ շատ հապուա-գիւտ երևոյթ է գիւղերում. երևում էր, որ պ. Ա. Պ. մեծ հոգս և նեղութիւն կրելով՝ պարագաների և պա-շարեղէնի մեծ մասը Զալալօղուց էր բերել տուել: Ե ընսուն հոգուց աւելի շարուեցինք սեղանի շուրջը. բա-ցի մեր խմբից ներկայ էին և չորս գաւառական ուսու-ցիչներ, Ե. Ե., Ս. Ք., Ա. Զ. և Ս. Յ., բոլորն էլ մեր դպրոցի նախկին սաներ<sup>1)</sup>: Հետզհետէ բերուող անուշ կերակուրները վայելելով և առաջարկուած կե-նաց բաժակների վրա երգելով՝ ուրախ ժամանակ անց-կացրինք. մեր կենացի առթիւ զաստիարակն ընդարձա-կօրէն բացատրեց դպրոցական ճանապարհորդութեան տուած օգուտները, որ մեծ հետաքրքրութեամբ էին լսում գաւառական ուսուցիչները: Ընթրէքին շատ ու-րախ կերպարանք էր տալիս այդ ուսուցիչներից մէկի, Եղիշէ Երզնկեանի (ալֆմ Հանգուցեալ) գուարճախօսու-թիւնները. նա խօսակցութեան մէջ հմտութեամբ զըա-քար բառեր գործ դնելով և կամ բառերը բարգելով՝ ծիծաղ էր պատճառում մեզ. օրինակ նա ասում էր. «Ճերդ մեծապայծառածանունչափալլութեան կենացը». կամ թէ աւելի բարգելով. «Ձերդ մեծապայծառահիա-շաճաճանչարփիափալլութեան կենացը». կամ ժողովրդա-կան ձևով. «ասալ ըլիս, բաղ ըլիս, չաղ լիս, բախչա ըլ-նիս, ծլիս, ճիկնոտիս, ծաղկիս, կանաչիս, օրհնեալ ես և օրհնեալ լինիս».. և այլն: Ընթրէքից լետու մեր ժմբուկին օգնութեան հասնելով գիւղական դառւլ-դուռ-

<sup>1)</sup> Ներկայ էին նոյնպէս մեզ հիւրասիրողի ծնողները՝ ե-րիտասարդի չափ առողյ հայրը և մեծ Շնանը, որ տան մէջ հսկողն ու նայողն էր. սրանց անպաճոյն և պարզ ու որոշ բա-ռերով արտասանած բարեմաղթութիւններն ու օրհնութիւններն ազդեցութիւն էին ունենում մեզ վրայ.

նան, սկսեցին միատեղ հնչեցնել պարի եղանակներ. «կլոր» ու «կէնտ» պարերով էլ մի առ ժամանակ զուարձանալով՝ գնացինք հանգստանալու, որպէս զի վազն առաւօտեան ճանապարհ ընկնենք դէպի Շուլաւէր: Այս օրուայ մեր ընթրիքը գիւղական հարսանիքի կերպարանք ունէր: Իրաւլ-զուռնալի ձայնի վրալ հաւաքուած գիւղացիները նոյնպէս ցրուեցին, որպէս զի լուսադիմին արդէն իրենց գործին գնան:

Գուցէ հարցնէք՝ թէ ով էր պ. Ա. Պ. որ ալսքան զուարձութիւն պատճառեց մեզ և պատուեց. ալդ յարգելի պարոնը ոչ մէկիս ոչ ազգականն էր և ոչ նոյն իսկ ծանօթը. Զալալ-Օլլում ծանօթացանք դրա հետ: Նա ազնիւ ձգտումների տէր երիտասարդ լինելով՝ ոգնորուել էր մեր ճանապարհորդութեան գաղափարով և տեսնելով ու լսելով մեր կրած կամաւոր նեղութիւնները՝ կամեցել էր մի գիշեր զուարձութիւն պատճառել մեզ և դրանով իր յարգանքը լայտնել մեր խմբին: Եւ ալդ առաջին օրինակը չէ մեր ճանապարհորդութեանց ընթացքում. իջրե նոր գործ՝ շատերն են կամեցել նպաստել և ալդպիսով խրախուսել մեր կազմակերպուած և որոշ ծրագիր ունեցող շրջագալութիւնները:

## 22 Օգոստոսի, հինգշաբերի. Աշխերի:

Առաւօտեան ժամի 6 ն անց էր, որ կաթնով թէլն ու գաթան վալելելով և գիշերուայ ընթրիքի պակասը մածնով ու մեղրով լրացնելով՝ սրտանց շնորհակալութիւն լայտնեցինք մեր հիւրընկալներին՝ իրենց անկեղծ և բուն հայկական հիւրտասիրութեան համար, հրաժեշտ տուինք նրանցը և նստելով մեր ֆուրգոնները՝ ճանապարհ ընկանք դէպի Աղքեօրփի:

Առաւօտեան թարմ և զով, առողջարար օգը ծծելով և զմալլուելով գեղեցիկ գաշտավալրերի և բլուրների տեսքով մի ժամից յետու հասանք Հայդարբէդ գիւղը, որի աները տարածուած են բլրի ստորոտում և թուով 70-80 են. գիւղից հեռու, գաշտի ծալրին, արևելեան կողմը, երևում էին մի քարաշէն եկեղեցու աւերակնե-

ըբ։ Շարունակելով մեր ճանապարհը կանաչազարդ և ընդարձակ հովտի միջով մօտ կէսօրին հասանք ոռւսաբնակ՝ «Պրիվոլյնի» գիւղը, որ բաւականին ընդարձակ տեղ է բոնում և ունի նորակառոյց եկեղեցի. այս գիւղն իր գիրքի բարձրութեան (1680 մետր բարձր ծովի մակերևոյթից) ու զովութեան պատճառով Շուլաւէցոյիների ամառանոցն է։ Անցնելով գիւղի երկայն ու լայն փողոցով կրկին գուրս եկանք ազատ դաշտի վրայ. այստեղ կրկին շնորհակալութիւն լայտնելով ձիով մեզ ուղեկցող պ. Ա. Պ. հրաժեշտ տուինք նրան. նա վերադարձաւ Ուռուտ։ Մօտենալով Օֆրէթ կոչուած լերան՝ ֆուրգոններից ցած իջանք և ոտքով էինք տուաջ գնում, որովհետեւ ճանապարհը դարիվեր և սաստիկ վատ էր. հէնց ալդ ճանապարհի վրայ մի սալիք եզները խրտնելով սալլը ձգել էին ձորը և ջարդ ու փշուր արել, բայց բարերազդաբար սալլապանն ազատուել էր։ Օֆրէթից սկսած ճանապարհն անցնում է խիտ անտառի միջով. երեսում է Լալուարն իր վեհապանծ գագաթով. շուրջդ տարածւում են կանաչազարդ բրուրներ, որոնցից բղխում են բազմաթիւ սառնորակ աղբիւրներ։ Գտնւում ենք 1800 մետր բարձրութեան վրայ. մեր ամբողջ ճանապարհորդութեան միջոցին ամենամեծ բարձրութիւնն է այս։ Անտառը լիքն է պտղատու ծառերով. վալրենի տանձն ու խընձորն արդէն հասել են. կարմրին է տալիս հունը։ Բնութեան ալդ սքանչելի վալրում կէս ժամաչափ հանգստանալով և հաց ու պանրի հետ ականակիտ սառն աղբիւրի ջուրը վալելելով սկսեցինք արդէն իջնել լերան գագաթից։ ճանապարհին անդադար պատահում ենք թուրք ճքոչուրաների, որոնք սարից իջնելով գնում են իրենց ձմեռուայ բնակարանները—գիւղերը։

Փամի ճ.ին երեաց Աղ-քեօրփի (սպիտակ կամուրջ) գիւղը։ Մօտենալով գիւղին, իջանք սալլից և քալեցինք դէպի փոքրիկ ձորը, որի միջով անցնում է «Աղ քեօրփուչար» կոչուած գետակը, որ կոչւում է նաև «Ճապաղ»։ այս գետակն իր սկիզբն առնելով Լալուարի աղբիւրներից և հետզհետէ ուրիշ ջրեր ևս ընդունելով իր մէջ մեծանում է և վերջը թափուում Խրամի մէջ։ ճապաղի

վրայ շինուած կամուրջն երբեմն սպիտակ քարից շինուած լինելով գիւղն էլ արդ կոչումն է ստացել և պահել մինչև այժմ, թէև կամուրջի քարերը փաղուց արդէն ալլ ևս սպիտակ չեն:

Դիւղը տարածուած լինելով անտառապլատ լերան լանջի վրայ՝ գեղեցիկ դիրք ունի. հեռուից երեւում է նաեւ կանաչապատ Լալուարը: Դետակի մօտ գտնուող խանութների առաջը մեզ դիմաւորեց մեր դպրոցի նախկին սան պ. Վահան Տէր Վարդանեանը, և հրաւիրեց մեզ իջևանելու իրենց տանը: Ընդունելով պ. Վ.-ի սիրալիր հրաւէրը՝ Փուրգոնները թողինք խանութների մօտ, իսկ մենք բարձրացանք գիւղը և իջեւանեցինք տեղական քահանալի, պ. Վ.-ի հօր տանը: Տունը շենուած էր ամբողջովին փայտից, պատերը ծեփած էին գաճով. տանիքը կղմինտրով ծածկած և թեք, մեզ հիւրասիրող ընտանիքի հիւրատունն էր տյս. իսկ ընտանիքն ապրում էր քար ու կրեալ հայկական տան մէջ: Սենեակում ըստ երկայնութեան ձգուած էր արևելեան «մեծ թախթը». պատերի վրայ եղած պահարաններում խառն ի խուռն ցրուած էին զանազան գրքեր, թըղթեր, տետրակներ, հին «Արարատ»ի համարներ, նաեւ մի քանի Նո՞ «Ծոլոյնու խօզայնց» գիւղատնեետ սական ամսագրի: Պ. Վահանն իր կէս եւրոպական և կէս գիւղական ապրուստով ու զգեստով մի տեսակ նոր տարագի խալիֆալի էր նմանում. ինքը մի համեստ և բարեսիրտ անձն էր և իր հարուստ հօր լաջորդն ու ժառանգը պիտի լինէր:

Նաշելուց ու մի փոքր հանգստանալուց լետոյ պ. Վ.-ի ուղեկցութեամբ բարձրացանք գէպի բլրի խիտ անտառները՝ գիտելու այնտեղ գտնուած «Խողովակներոց» գանքը: Երկու երեք վերստ տարագծութիւնը լիտ անտառի մէջ մի ժամաշափ գնալուց լետոյ՝ ծառերի միջից երեաց վանքի խախտուած գմբէթի ծալը. անցնելով մի փոքրիկ ձոր և սառնորակ աղբիւրից կուշտ խմելով՝ դուրս եկանք վանքի առաջ, որ գիւղից հարաւարեւէր է գտնուում:

Վանքը շրջապատուած է եղել պարիսպով, որի

Հետքերն են մնացել այժմ. կանգուն է դեռ սրբատաշ քարից շինուած ընդարձակ և կիսաքանդ մուտքը. Արեւմտեան կողմը վանքն ունի գաւթիթ, որի մուտքը գտնուում է արեւմտեան կողմից. Պարսպի մուտքից մինչեւ գաւթի մուտքը բուսած են ահագին մեծութեամբ թփեր ու փշեր. Գաւթիթը քառակուսի է, 15 արշն մեծութեամբ. ամբողջովին շինուած է սրբատաշ դեղնագոյն քարից և ինչպէս երկում է, յետոյ է կառուցուած: Կամարներն ազատ սիւների վրայ չեն հիմնուած, այլ հաստատուած են ութիթ հատ կիսասիւների վրայ. այդ կիսասիւների կամարները միմեանց կտրելով՝ կազմում են գաւթի փոքրիկ կաթուղիկէն, որ ներսից քանդակագործուած է եղել: Գաւթի ճարտարապետութիւնը նման է Հաղպատի գրատանը, բայց դարանների փոխարէն լուսամուտներ ունի: Գաւթի շինութիւնից միայն որմերն ու կամարներն են ամբողջ մնացել, իսկ առաստաղը մեծ մասամբ աւերռուած է. գմբէթը նոյնպէս կիսով չափ քանդուած է: Առաստաղի ամբողջ մնացած մասերի վրայ երեւում են նկարների հետքեր, որ ապացուց է՝ թէ առաստաղը սկզբում նկարուած է եղել գունաւոր ներկերով:

Գաւթի մուտքի աջ և ձախ կողմը գտնուում են մի մի լուսամուտներ. մի մի հատ էլ կան հարաւալին և հիւսիսալին որմերում. արևելեան որմի մէջ ևս, որով գաւթիթը կցուած է եկեղեցու շէնքին, գտնուում են երկու փոքր լուսանցքներ՝ եկեղեցու միջից: Արեւելեան որմի կամարներն ու հարաւալին որմն արձանագրուած են: Գաւթի արեւելեան որմի մէջ է գտնուում եկեղեցու կամարակապ մուտքը, որի ճակատին գտնուած արձանագրութիւնը վանքի շինութեանն է վերաբերում.

(Թուին ԶԱ. (701. 1252 փրկչ.) և հայրապետութեան. Տ. Կոստանդեայ, արհի եպիսկոպոսութեան Համազասպայ և յաշխարհակալութեան և զաւրապետութեան.... ի թագաւորութեան Դաւթի ես Ստեփաննոս որդի Յովհաննալ գնեցի գլուխակերտ և զիւր գեղն, զալգին որ ի Նղեր վանիցս յաւիտեան ի կա սպիտակ սուլտանի և շինեցի զսա ի հիմանէ սկսեալ յուսովն

անմահին Աստուծոյ լինել ինձ և եղբարց իմոց և որդոց արձան կենդանի և տեղի գերեզմանի մինչև գոյ Քըսատոս և առնէ ողորմութիւն ինձ և իմոցն ի փառու իւր. արդ որք խախտել ջանան զիմ տուածն լեկեղեցւոյս և կամ զտեղիս հանել յազգէ իմմէ, խախտեսցին և անկցին... քրիստոնէութենէն»:

Գուցէ արձանագրութեան մէջ լիշուած Խորակերտ գիւղը հէնց Աղքեօրփին է, որ վերջն ալդ անունն է ստացել: Միւս արձանագրութիւնները վերաբերում են զանազան նուրիրատութեանց:

Եկեղեցու մուտքի աջ և ձախ կողմը կան մի մի պատարագամատոյց խորաններ, որոնց լուսամուտներն, ինչպէս լիշեցինք, գտնթի մէջ են բացւում: Նոյնալիսի խորաններ գտնւում են նաև բեմի աջ և ձախ կողմը:

Եկեղեցին անսիւն է և հաստատուած 4 կամարների վրայ, որոնցից արևմտեանը և արևելեանը մեծ են, իսկ միւսները՝ փոքր: Կամարները միանալով միմեանց հետ՝ իրենց վրայ են կրում եկեղեցու գեղեցիկ և ընդարձակ կաթուղիկէն՝ հաստատուած երեսուն փոքրիկ սիւների վրայ: Դմբէթի ներսից գտնւում են փոքրիկ քարեալ կամարներ, որոնք միմեանց կարելով՝ մէջ տեղում ներկայացնում են երկու եռանկիւններ, որոնք միմեանց կտրում են: Իւրաքանչիւր կամարի տակ մի լուսամուտ կալ.—արևմտեանը փակ է:

Եկեղեցին բացի արևմտեան մուտքից ունի և մի ալլ մուտք հարաւալին որմի մէջ, Նէնքն արտաքին կողմից մաքուր, սրբատաշ քարից է, իսկ ներքուստ ոչ սըրբատաշ քարից և վրան սրուածքի հետքեր են երեսում: Քարերն անձրևից ու խոնաւութիւնից վնասուած են: Յատակը ծածկուած է հողով: Երկալնութիւնն է 18 արշին, լայնութիւնը  $10\frac{1}{2}$ , արշին. քեմի բարձրութիւնը 1 արշին. եկեղեցին առհասարակ անխախտ է մնացել, միայն տանիքն է խախտուած և վրան ահագին ծառեր են բուսել: Մտնելով ալս սրբատեղին, քիչ է մնում, որ մարդու աշքերն արտասուքով լցուին՝ տեսնելով այս հրաշալի շէնքը կենդանիների աղբով լիքը... Տէ՛ր Աստուած, մինչեւ երբ պէտք է Քո սուրբ տաճարներն ու

աղօթատեղիներն ալսպէս պղծուած մնան. ժամանակ չէ. .:

Եկեղեցու շուրջը գտնւում են բազմաթիւ գերեզմանաքարեր, որոնցից ուշադրութեան արժանի է մի գեղեցկաքանդակ խաչքար՝ կանգնեցրած բարձր և լայն պատուանդանի վրայ. ալդ խաչքարն ու պատուանդանն արձանագրութիւն չեն կրում, միայն խաչքարի ճակատին համառօտ գրուած է. «սբ. նշան տէրունական»: Աչքի էին ընկնում նոյնպէս մի առանձին ձեւի տապանաքարեր, որոնք քառանկիւնու ձեւ ունէին, լայն մասերը գետսի մէջ թաղուած, իսկ երեք կողմերը զարդարուած զանազան պատկերներով. օրինակ՝ մարդու պատկեր մէկ ձեռքին նիզակ, միւս ձեռքին սանձ բռնած:

Եկեղեցու շուրջն այնպիսի բարձր փշուոր թիեր ու խոտեր են բուսել, որ մարդ գժուարանում է դրանց միջովն անցնել: Եկեղեցուց մի փոքր հեռու, արևելեան կողմը կալ մի ընդարձակ եկեղեցու աւերտկ. մնացել է կանգուն միմիայն բեմի արևելեան պատի կամարաձեւ մասը, որ շինուած է սրբատաշ քարից: Տեղացիք ալս շէնքին բաղանիք են անուանում, ասելով թէ մէջը զըի խողովակներ են գտել: Բայց շինութեան ձեից երեսում է, որ եկեղեցու աւերակ է. ապացոյց են նաև այն երկու խորանները, որ շինուած են ալդ աւերակի աջ և ձափի կողմը:

Վանքը շինուած է ծովի մակերևոլթից 1300 մետր բարձրութեան վրայ. երեկոյեան 7 ժամին ջերմաչափը ցոյց է տալիս 16 աստ. Բ:

Արդէն խաւարը տիրել էր անտառում, երբ մենք ուրուականների նման դուրս եկանք անբաղդ աւերակների միջից և խուլ ու մունջ թիերի ու ծառերի միջով ճանապարհ ընկանք դէպի մեր իջեանը՝ պ. Վահանի աւաշնորդութեամբ: Անտառի մէջ խորին, գերեզմանական լոռութիւն էր տիրում. մի անսովոր ազդեցութիւն է գործում մեզ վրայ խաւարը. զգուշութեամբ փոխում ենք մեր քալիերը մթութեան մէջ՝ կարծես թէ վախենում ենք իսկանդարել մեզ շրջապատող անհուն հանգըստութիւնն ու լոռութիւնը: Լսում է միայն ճապուռի ձալ:

նը և ծառերի մեղմ սօսափիւնը։ Գիշեր ժամանակ անտառում առհասարակ մարդ երկիւղի ազգեցութեան ներքոյ է լինում և աչքին զանազան երևոյթներ են երեւում։ ամեն մի չնչին ստուեր գազանի կերպարանք է ընդունում, որ պատրաստում է լարձակուել մարդու վրայ։ Մեր մտքերից արդպիսի երկիւղները ցրուելու նըսպատակով դաստիարակը պատռիրեց խմբովին երգելով առաջ գնալ։

Արդպիսով մութի մէջ խարխափելով ու տատանուելով կորի նման, երբեմն ընկնելով, վերկենալով, զուարճանալով ու շարունակ երգելով՝ հասանք գիւղը և մեծ ախորժակով հաց ու պանիրն ու թէլն վայելելով՝ անմիջապէս Մորփէոսի գիրկն ընկանք՝ ընդարձակ թախտի վրայ և պատշգամբում։

### 23 Օգոստոսի, ուրբաթի. Շուշանէր։

Առաւտօտեան 4<sup>1</sup>/<sub>2</sub>, ժամին արդէն ամենքս ոտքի վրայ էինք. օրը մի փոքր ամմալամած էր և զով։ Թէյ խմելուց լետոյ շնորհակալութիւն լայտնեցինք մեր հիւրընկալին և իջնելով ձորը՝ կամուրջի մօտ հրաժեշտ տուինք պլ. Վահանին, նստեցինք մեր ֆուրգոնները և գիմեցինք գէալի Շուլաւէր։ ծանապարհն անցնում էր գեղեցիկ բլուրների վրայով, խիտ անտառների միջով։ մերթ բարձրանում, մերթ իջնում էինք։ ծանապարհի ձախ կողմից կարկաչելով վազում է մի առու՝ շրջապատուած ուռենիներով։ առուից ձախ հոսում է Շուլաւէրայ ջուրը, իսկ ալդ հոսանքից էլ ձախ կողմը խիտ ու անսպառ անտառներն են։ Մի փոքր բաց տեղերում շարուած էին խոտի գէզերը, որ պատկանում են Զանախչի և Օփրէթ գիւղերին։

Երկինքն հետզհետէ պարզուեց և արևի ճառագալթներն սկսեցին իրենց ոլժն ու զօրութիւնը կամաց կամաց զգալի անել։ Ժամի տասն էր, որ հասանք «Խոժողովնի» հայաբնակ գիւղը և կրկին շարունակեցինք մեր ճանապարհը. արդէն պարզ երևում է «զուլի գետուկ» արը, որի ստորոտում տարածուած է Շուլաւէրը։ Կէս

օրուալ մօտ երևացին Շուլաւէրի ալգիները. անցանք փոքրիկ գետակը և մտանք ալգիների ընդարձակ շարքի մէջ. խաղողի անժիւ ողկոյզները ժապում են հեռուից. ծառերի ճիւղերից կախուած են դեղձը, ինձորը, տանձը, նուռը և ալն. բայց ամենից մեծ տարածութիւն են բռնում խաղողի վազները:

Անցնելով գիւղի միջով՝ իջևանեցինք սր. Աստուածածին եկեղեցու մօտ կառուցուած տղալոց դպրոցում. երեք ժամի չափ հանգստացանք, ճաշեցինք և նորից ճանապարհ ընկանք: Միակ նորութիւնը, որ տեսանք Շուլաւէրում՝ այն էր, որ կալերում էշեր էլ էին լը. ծել...:

Երբ դուքս եկանք գիւղի ալգիների շարքից, բնութիւնը բոլորովին փոխուեց. մինչև Շուլաւէր շարունակ անցնում էինք խիտ անտառների, կանաչազարդ բլուրների, հովիտների ու ձորերի միջով, իսկ այժմ անցնում ենք ընդարձակ և բուսականութիւնից զուրկ ձանձրալի դաշտի վրայով: Արևի ճառագայթները կիզում են սաստիկ և մեզ համար արդ աւելի զգալի էր, որով հետև գեռ երէկ համարեա մըսում էինք 1800 մետր բարձրութեան վրայ, իսկ այժմ գնում ենք 300 մետր բարձրութիւն ունեցող ջերմ դաշտավալրի փոշոտ կառուղիով: Անցնելով ճիւղաւորուած խրամ գետի վրայով, ուղևորուեցինք դէպի թրքաբնակ Ղըզըլհաջլու և այնտեղից Մառնէուլ գիւղը. արդէն մուլթն էր. իջևանեցինք մի խանութի առաջ, թէլ խմեցինք, ընթրեցինք և ոմանք ֆուրգոններում, ոմանք խանութի առաջ տարածուելով անուշ քնեցինք:

Առաւօտեան ժամի  $2\frac{1}{2}$ , էր, որ զարթեցինք և Յին արդէն մեր ֆուրգոնները շարժուեցին տեղից. գնում էինք փայլուն աստղերի լուսով, մինչև որ արեւելքը շառագունեց և արևի կարմրագոյն ճառագայթներն ընկան շրջակալ բարձրութեանց վրայ: «Առաւօտ լուսոյն երգելով անցնում ենք դաշտի միջով. ճանապարհը լիքն է սեխի և ճմերուկի սալլերով: Ժամի 9-ին հասանք «Սողանլուխ». իջևանեցինք մի խանութում, թէլ խմեցինք և վայելեցինք մեր ճանապարհոր-

գութեան կերջին ճաշը, որ բաւականին ուրախ անցաւ։  
 Ժամի 1-ին ճանապարհ ընկանք Սողանլուխից և  
 ժամի 4-ին իջանք մեր ալմա mater ի բակում։ Վեր-  
 ջին անդամ դաստիարակը հաւաքեց մեզ իր շուրջը,  
 վերջին անդամ մի քանի զերմ խօսքերով խրախուսեց  
 մեզ՝ լինել ուսումնասէր և ջանասէր, երախտագէտ  
 գէպի դպրոցն ու վարչութիւնը. յորդորեց՝ մեր ճա-  
 նապարհորդութեան ընթացքում տեսածն ու լսածը  
 խորը կերպով տպաւորել մեր սրտերում և մեր ալցե-  
 լած նուիրական վայրերի սր. լիշտակներն անջնջելի  
 պահել. Այսուհետև շնորհակալութիւն յալտնեց մեր  
 կանոնաւոր ընթացքի համար, սեղմեց ամենքիս ձեռ-  
 քը և հեռացաւ. Երկար ժամանակ դպրոցի բակը դդը-  
 դում էր մեր «կեցցէ»-ների ձալներով...»

Խ. Ցարութիւնեանց.

